# *Առաքինի Ղուրանի Վերջին Տաս Բաժինների Իմաստային Մեկնաբանությունը*

# تفسير معاني العشر الأخير باللغة الأرمينية

الهيئة العالمية لترجمات معاني القرآن الكريم

Բոլոր Լեզուներով Առաքինի Ղուրանի Իմաստային Թարգմանության Աշխարհահայտ Ընկերություն

Հսկող հանձնաժողով

**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)**

# تفسير معاني العشر الأخير باللغة الأرمينية

# Առաքինի Ղուրանի Վերջին Տաս Բաժինների Իմաստային Մեկնաբանությունը

الهيئة العالمية لترجمات معاني القرآن الكريم

Բոլոր Լեզուներով Առաքինի Ղուրանի Իմաստային Թարգմանության Ախարհահայտ Ընկերություն

Հսկող հանձնաժողով

المركز الأوروبي للدراسات الإسلامية

**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)**


info@quran-international.com

## Սուրա 58 Ալ-Մուջադիլահ [Վիճող Կինը]

Ալլահի Անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Ճշմարիտ, Ալլահը լսել է մեկի *(Թալաբայի դստեր Խուլայի)* խոսքերը, ով վիճում էր քեզ հետ *(Օ, Մուհամմեդ)*, կապված իր ամուսնու *(Աուսի, Աս -Սամիթի որդու հետ, ով ասաց նրան. "Դու կարծես իմ մոր մեջքը լինես." Սա նշանակում է, "Ինձ արգելված է մոտենալ քեզ." Սա ամուսնալուծության մի տեսակ էր որը կոչվում էր, Ազ-Զիհառ, որը տարածված էր Արաբների մեջ մինչ Մուհամմեդի մարգարեությունը:. Բայց կանայք չէին ազատվում այս"բաժանումից" հետո, նրանք չէին կարող ամուսնանալ ուրիշ մեկի հետ.)*, և ուղղում էին իրենց բողոքները *(աղոթքները)* Ալլահին: Եվ Ալլահը լսեց երկխոսությունը *(և քննարկումը)* ձեր երկուսի միջև: Ճշմարիտ, Ալլահը ՛Սամի է՛ *(Ամենալսողն)*, Բասիր *(Ամենատեսնողն)* է: ﴿

2. ﴾ Նրանք ձեր միջից, ովքեր դարձնում են իրենց կանանց անօրինական իրենց *Ազ-Զիհառով* *(կոչելով նրանց իրենց մայրեր")*, - նրանք *(կանայք)*, *[հետևաբար]* նրանց մայրերը չեն: Փաստորեն նրանց մայրերը ոչ այլ ոք են, քան նրանք, ովքեր կյանք են տվել նրանց *(և ոչ ոք չի կարող փոխարինել նրանց)*: Եվ իրոք, նրանք արտահայտում են Մունքար *(վատ, մերժված և արգելված)* խոսք և սուտ: Եվ իրոք Ալլահը 'Աուֆ *(Միշտ Ներող)* և Ղաֆուր *(Միշտ թողություն)* տվող է: ﴿

3. ﴾ Եվ նրանք ովքեր դարձնում են իրենց կանանց անօրինական իրենց համար *Ազ-Զիհառով* և հետո ցանկանում են վերադառնալ նրան, ինչ ասել են *(մոտենալ իրենց կանանց կրկին)* ապա, *(տուգանքը այդ պարագայում արաբերեն "Քուֆարան է ")* ստրուկի ազատում, նախքան նրանք կմերձենան: Սա է *(այս տույժը)* նկատողություն ձեզ *(այնպես որ դուք չեք կրկնի այսպիսի հիվանդագին արարք)*: Եվ Ալլահը Խաբիր *(լավ գիտակ)* է այն ամենի, ինչ դուք անում եք: ﴿

4. ﴾ Եվ նա ով չի գտնում *(ստրուկ ազատելու կամ գումար ազատելու ստրուկ )*, պետք է պահք պահի երկու ամիս հաջորդաբար, մինչ նրանք երկուսը կմոտենան միմյանց: Եվ նա, ով ի վիճակի չէ անելու այդ *(պահք պահել)*, պետք է կերակրի վաթսուն *Միսիկին* *(կարիքավորների)*: Սա այդպես է որ դու հավատաս *(կատարել ագործես քո հավատքը)* Ալլահին և Նրա Մարգարեյին *(անել այն, ինչ Ալլահն է հրամայել և հետևել Նրա Մարգարեյին, և չկրկնել այդ մեղքը կրկին)*: Սրանք սահմաններ են հաստատված Ալլահից: Եվ նրանց, անհավատների համար *(ովքեր մերժում են ինչ Ալլահը հրամայել է)*, կա ցավոտ պատիժ: ﴿

5. ﴾ Ճշմարիտ նրանք, ովքեր ընդդիմանում են Ալլահին *(ոտնահարում են Նրա հրամանները և Նրա օրենքները, հետևում են ուրիշ օրենքների, և ցույց են տալիս թշնամություն Նրան)* և *(նույնպես ընդդիմանում են)* Նրա Մարգարեյին, կանպատվեն *(և կստորացվեն)*, ինչպես նրանք, իրենցից առաջ *(նախկին ազգերից)* անպատվել են *(և ստորացվել են)*: Եվ Մենք ուղարկել ենք պարզ *Այաթ* *(ապացույցներ, վկայություններ, Տարբերակներ, դասեր, նշաններ, լուսաբանումներ,*

*և այլն, ապացուցելու, որ Ալլահի օրենքները ճշմարիտ են)*: Եվ ինչ վերաբերում է անհավատներին *(այս Այաթներում)* կա անպատիվ պատիժ: ﴾

6. ﴾ Այն Օրը, երբ Ալլահը կվերակենդանացնի նրանց միասին *(այսինքն Հարության Օրը)* և կտեղեկացնի նրանց ինչ արել են *(լավ և վատ արարքները)*: Ալլահը գրառել է այն *(նրանց լավ և վատ արարքների գրքերում)*, մինչ նրանք մոռացել են այդ: Եվ Ալլահը Վկա է ամեն բաների *(ոչինչ թաքնված չէ Նրանից)*: ﴿

7. ﴾ Դուք չե՞ք տեսնում, որ Ալլահը գիտի, ով երկնքում է և ով երկրի վրա է: Չկա ոչ մի *Նաջվա (գաղտնիք կամ անձնական խոսակցություն)* երեքի *(մարդկանց)* բայց Նա *(Ալլահը)* նրանց չորրորդն է *(Իր Գիտությամբ)* ոչ *(Նաջվա)* հինգի, բայց Նա, նրանց վեցերորդն է *(Իր Գիտությամբ)* ոչ *(Նաջվա)* ավելի քիչ քան այդ, կամ ավելի, բայց Նա նրանց հետ է *(Իր Գիտությամբ)*, որտեղ, որ նրանք լինեն: Եվ հետո, Հարության Օրը, Նա կտեղեկացնի նրանց ինչ արել են *(լավ և վատ արարքներ)*: Ճշմարիտ, Ալլահը ‘Ալիմ *(Ամենագետն)* է ամենի: ﴿

8. ﴾ Դուք չես տեսնում *(Օ, Մարգարե)* դրանք *(հրեաները)* ում արգելել են *(և զգուշացրել են այդ մասին)* *Ան-Նաջվա* *(գաղտնի խոսակցություններ, այսինքն. Գործողություն որ հրեաները սովորություն ունեն անելու. Մինչ տեսնում են Մուսուլմանը անցնում է նրանց մոտով, նրանք սկսեցին զրուցել գաղտնի մինչ դիտում էին մուսուլմաններին, աչքով անելով միմյանց, կարծես նրանք բամբասում էին նրա մասին, ստիպեց մուսուլմաններին վատ զգալ կամ մտածել, որ մուսուլմանը տանջվում է որևէ փորձանքից և նրանք չեն ասում ասում նրան: Մուսուլմանները գնացին Մարգարեյի մոտ և բողոքեցին: Նա զգուշացրեց Հրեաներին և արգելեց նրանց անել այդ կրկին)*: Եվ հետագայում նրանք վերադարձան դրան, որը նրանց արգելվել էր *(և զգուշացվել էր)*, և խոսեցին միմյանց մեջ *(Ան-Նաջվա)* մեղքում և հարձակողական և չենթարկված ձևով Մարգարեյին *(Մուհամմեդ)*: Եվ երբ, նրանք գան քեզ մոտ, նրանք ողջունում են քեզ ողջույնով որով Ալլահը չի ողջունում քեզ *(երբ Հրեաները գնացին Մարգարեյի մոտ, նրանք ողջունեցին նրան ասելով “Աս-Սամ ‘Ալեյքում” որը նշանակում է “մահ լինի քեզ” Իսլամական “Աս-Սալամ ‘Ալեյքում”ողջույնի փոխարեն, որը նշանակում է “խաղաղություն լինի քեզ”)*, և ասում են իրար միջև *(կամ միմյանց)*: “Ինչու՞ Ալլահը չպատժեց մեզ այն բանի համար, ինչ մենք ասում ենք *(եթե Մուհամմեդը իրական Մարգարե է)*” *(Բայց Ալլահի պատասխանն է սրան:)* “Դժոխքը կլինի բավարար նրանց համար, նրանք կայրվեն այնտեղ: Եվ ճշմարիտ, այդ ճակատագիրը վատագույնն է ﴿

9. ﴾ Օ, դու, ով հավատում է. Երբ դու զրուցում ես անհատապես, մի զրուցիր մեղքով և հակամարտությամբ և անհնազանդությամբ Մարգարեյին, բայց զրուցիր *(միայն)* Ալ-Բիրով *(առաքինի)* և *Աթ-Թաքվա* *(արժանավայել և բարեպաշտորեն)*; և վախեցիր Ալլահից, Ում մոտ դու կհավաքվես *(Հարության Օրը)*. ﴿

10. ﴾ Փաստորեն *Ան-Նաջվա* *[անձնական խոսակցությունը (վատ ձևով, այսինքն, մեղքում, և այլն.)]* միայն Շեյթանից *(Սատանայից)* է *(այսինքն, Սատանայի շշնջոցներից է)*, որպեսզի նա կարողանա պատճառել վիշտ հավատացյալներին:

Բայց նա չի կարող վնասել նրանց ամենափոքր ձևով, բացառությամբ, երբ Ալլահն է թույլատրում: Եվ թող Ալլահի վրա դնեն իրենց վստահությունը հավատացյալները: ﴿

11. ﴾ Օ դու, ով հավատում է. Երբ քեզ ասում են պատրաստել սենյակ հավաքների, *(պարզիր և)* պատրաստիր սենյակ: Ալլահը կտա քեզ *(ընդարձակ)* սենյակ *(իր գթասրտությունից, դրախտ կամ որևէ լավ բան)*: Եվ երբ, քեզ ասում են վեր կենալ *(աղոթքի կամ որևէ լավ արարքի)*, վեր կացեք: Ալլահը կբարձրացնի աստիճանում նրանց ձեզանից, ով հավատում է, և նրանք, ում պարգեվված է գիտելիք: Եվ Ալլահը Խաբիր *(Լավ Տեղեկացված)* է, ինչ ես անում դու: ﴿

12. ﴾ Օ, դու, ով հավատում է. Երբ դու *(ցանկանում ես)* խորհրդակցել Մարգարեյի հետ *(Մուհամմեդի, ցանկացածի շուրջ)* անհատական, ծախսիր որևէ բան բարեգործության մեջ *(աղքատին)*, մինչ քո անհատական խորհրդակցությունը: Դա կլինի ավելի լավ *(կբերի քեզ բարիք և պարզև)* և մաքրություն քեզ համար *(այն, կմաքրի քո սիրտը մեղքերից)*: Բայց, եթե դու չգտնես *(միջոցներ բարեգործության համար)*, ապա, իրոք, Ալլահը Ղաֆուր *(-Ներող)* Ռահիմ *(Ամենագթասիրտ) է*: ﴿

13. ﴾ Դու վախենու՞մ ես ծախսել բարեգործության *համար (աղքատությունից ելնելով)* մինչ քո անհատական խոսակցությունը *(Մարգարեյի հետ)*: Եթե, հետո դու չես արել, և Ալլահը ներել է քեզ, ապա *(ամենաքիչը)* կատարիր *Սալեհ (աղոթք)*, և տուր *Զաքյաթ (տարեկան պարտադիր բարեգործություն)*, և ենթարկվիր Ալլահին և Նրա Մարգարեյին *(այսինքն, Արա ամեն ինչ, ինչ Ալլահը և Նրա Մարգարեն հրամայել են քեզ)*: Եվ Ալլահը Խաբիր *(Լավ Տեղեկացված)* է, ինչ դու անում ես: ﴿

14. ﴾ Դու *(Օ, Մուհամմեդ)* չե՞ս տեսել նրանց *(փարիսեցիներին)*, ում վերցրել ես ինչպես *'Աուլիյա' (ընկեր, պահապան, այլն)*, մարդիկ *(այսինքն, Հրեաներ)* ում վրա է Ալլահի Անեծքը *(սա վերաբերում է փարիսեցիների խմբին, ով պնդում է, որ նրանք մուսուլմաններ են, մինչ տանում են հավատացյալների գաղտնիքները Հրեաներին)*: Նրանք ոչ քեզանից *(մուսուլմաններ)*, ոչ էլ նրանցից *(Հրեաներից)* են, և նրանք երդվում են ստի մեջ *(որ նրանք մուսուլմաններ են և նրանք հավատացել են քեզ, ինչպես Մարգարե)*, մինչ նրանք գիտեն *(որ նրանք խաբեբաներ են, ինչին նրանք երդվել են)*: ﴿

15. ﴾ Ալլահը պատրաստել է նրանց համար դաժան պատիժ: Չարիքը, իրոք այն է,ինչին նրանք սովոր են *(նրանց փարիսեցիությունը, խաբեությունը Մուսուլմանների նկատմամբ, աջակցությունը և խորհուրդը Հրեաներին մուսուլմանների դեմ և սուտ երդումները)*: ﴿

16. ﴾ Նրանք արել են իրենց *(կեղծ)* երդումները հիմք *(իրենց չար գործողությունների)*. Այսպես նրանք խանգարում են *(մարդկանց)* Ալլահի Ուղղուց *(Իսլամից)*. Այսպիսով, նրանք կունենան ստորացուցիչ պատիժ: ﴿

17. ﴾ Նրանց ունեցվածքը և նրանց երեխաները չեն օգնի նրանց Ալլահի դեմ *(Նրա պատժի)*: Նրանք կլինեն Կրակի բնակիչներ. նրանք կբնակվեն այնտեղ հավերժ: ﴿

18. ﴾ Այն Օրը, երբ Ալլահը հարություն կտա նրանց բոլորին միասին *(իրենց հաշվի համար)*, ապա նրանք, կերդվեն Նրան *(որ նրանք հավատացյալներ էին)*, ինչպես նրանք երդվել են ձեզ *(Օ, Մուսուլմաններ)*: Եվ նրանք կարծում են, որ նրանք ունեն որևէ բան *(կանգնելու), (նրանք կարծում են, որ իրենց ստերին կհավատան և որ նրանք ի վիճակի կլինեն թաքցնել իրենց անարդարությունները, ինչպես նրանք արել են աշխարհիկ կյանքում)*: Բայց իրոք, նրանք խաբեբաներ են: ﴿

19. ﴾ *Շեյթանը (Սատանան)* չափից դուրս հզորացրել է նրանց: Այսպիսով, նա ստիպել է նրանց մոռանալ Զիքր –Իլեհ *(Ալլահին հիշելը)*: Նրանք *Շեյթանի (Սատանայի) մարդիկ են.*: Իրոք, դա Շեյթանի մարդիկ են, *(Սատանայի, նրանք ովքեր հետևում են նրան)* կլինեն պարտվողներ. ﴿

20. ﴾ Նրանք, ովքեր ընդիմանում են Ալլահին *(ոտնահարում են Նրա հրամանները և Նրա օրենքները, հետևում են ուրիշ օրենքների և ցույց են տալիս թշնամություն Նրա նկատմամբ)* և Նրա Մարգարեի *(Մուհամեդի)*, կլինեն ամենաստորացվածների մեջ *(և աշխարհիկ կյանքում, և ետմահու կյանքում)*: ﴿

21. ﴾ Ալլահը գրել է *(այսինքն, հրամայել է) (Ալ-Լոհ Ալ–Մահֆուզում)*: “Ճշմարիտ, Ես և Իմ Մարգարեներն են ովքեր կհաղթեն.” Ճշմարիտ, Ալլահը Կավեյ *(Ամենահզոր-)*, ‘Ազիզ *(Ամենակարող, Անպարտելին)* է: ﴿

22. ﴾ Դու չես գտնի *(Օ, Մուհամեդ)* մարդկանց,ովքեր հավատում են Ալլահին և Վերջին Օրվան *կապված լինելով (սեր, կամ վերցնում են նրանց ինչպես Աոլիյա’- պաշտպաններ –պահապաններ -ընկերներ)* առ նրանց, ովքեր ընդիմանում են Ալլահին *(ովքեր ցույց են տալիս թշնամություն Նրան և Նրա կրոնին, և ոտնահարում են Նրա հրամանները և Նրա օրենքները)* և Նրա Մարգարեի *(այստեղ այն չի վերաբերում ոչ մուսուլմաններին, այն վերաբերում է նրանց, ովքեր ցույց են տալիս թշնամություն Ալլահին և Նրա կրոնին և նրա Մարգարեյին)*, չնայած նրանք, նրանց հայրերը կամ նրանց զավակներն են կամ նրանց եղբայրները կամ բարեկամներն են *(մարդիկ)*: Այսպիսիների համար Նա գրել է Հավատք իրենց սրտերում, և աջակցում է նրանց ոգով Իրենից *(այսինքն, պաշտպանություն և հաղթանակ ընդդեմ նրանց հակառակորդների, աշխարհիկ կյանքում)*, և *(ետմահու կյանքում)*:Նա կընդունի նրանց Այգիներ *(Դրախտ)* որի տակ գետեր են հոսում, և նրանք կբնակվեն այնտեղ հավերժ: Ալլահը գոհ է նրանցից *(այսինքն, Նա բավարարված է նրանցով, սիրում է նրանց, ներում է նրանց և ընդունում է նրանց լավ արարքները և Նա երբեք չի բարկանա նրանց վրա)*, և նրանք գոհ են Նրանով *(բավարարված այն ամենով ինչ Նա տալիս է նրանց)*: Նրանք Ալլահի բանակից են: Ճշմարիտ, Ալլահի զորքերն են, որ. կլինեն հաջողակ: ﴿

## Սուրա 59 Ալ-Հաշր [Հավաք]

Ալլահի անունով, Առ -Ռահմեն *Ամենաբարեգութ*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Ով երկնքում է և ով երկրի վրա է, փառաբանիր Ալլահին *(նրանք փառաբանում են Ալլահի անունը բառերով, որ մերժում է որևէ անկատարություն նրան):* Եվ Նա Ալ-'Ազիրզ *(Ամենահզոր, Անպարտվելի),* Ալ-Հակիմ *(Ամենաիմաստունն Իր դատաստանում, Իր Օրենքներում, Իր կառավարման մեջ.....և այլն.) է:* ﴾

2. ﴿ Այդ Նա է, Ով վտարել է անհավատներին, Գրերի մարդկանց միջից, իրենց տներից առաջին հավաքին *(կապված Բանու Ան-Նադիր ցեղի Հրեաների հետ, ովքեր կոտրեցին խաղաղության համաձայնագիրը Մարգարեյի հետ, ջանալով սպանել նրան, համագործակցելով կռապաշտների հետ, Մուսուլմանների դեմ)*: Դուք չմտածեցիք *(Օ, Մուսուլմաններ, )* որ նրանք դուրս կգային *(իրենց տներից իրենց հզորության շնորհիվ)*: Եվ նրանք կարծեցին, որ իրենց ամրոցները կպաշտպանեյին նրանց Ալլահից. Բայց Ալլահի Անեծքը հասավ նրանց,որտեղից նրանք չեին սպասում, և Նա սարսափ զցեց իրենց սրտերը, այնպես որ, նրանք ավիրեցին իրենց բնակավայրերը իրենց իսկ ձեռքերով *(որովհետև Մարգարեն թույլ տվեց նրանցից յուրաքանչյուրին վերցնել իր հետ ինչ նրա ուղտը կարող է կրել)* և հավատացյալների ձեռքերը: Հետո վերցրեք հանդիմանություն *(զգուշացում)*, Օ, դու, որ դու անես աչքեր *(տեսնելու)*: ﴾

3. ﴿ Եվ չի եղել, որ Ալլահը գրել է *(հրամանագրված)* աքսոր նրանց համար, Նա հաստատուն պատժում է նրանց այս աշխարհում; և հանդերձյալ կյանքում, նրանցը կլինի Կրակի տանջանքը: ﴾

4. ﴿ Դա նրանք ընդիմանում են *(թշնամությամբ)* Ալլահին և Նրա Մարգարեյին *(նրանք ոտնահարեցին Նրա հրամանները և օրենքները, մարտնչելով ընդդեմ Ալլահի և Նրա Մարգարեյի)*: Եվ ով դեմ է Ալլահին, ապա իրոք, Ալլահը Դաժան է պատժում: ﴾

5. ﴿ Ինչ որ դուք *(Օ Մուսուլմաններ)* կտրել եք արմավենու ծառից *(թշնամու)*, կամ դուք թողել եք այդ կանգուն իր արմատին *(որովհետև Հրեաները ձգել են նետերը և քարերը իրենց ամրոցների գագաթից, և արմավենիները և նրանց այգիները օգնել են հասնելու այսպես)*, Ալլահի Թույլտվությամբ էր, և որպեսզի Նա կարողանա անպատվի Ֆասիքուններին *(նրանց, ովքեր շեղվել են Ալլահի Ուղղուց, ճնշողներ, նրանք, ովքեր պնդում են իրենց մեղքերը)*: ﴾

6. ﴿ Եվ ինչ Ալլահը տվեց որպես ավար *(Ալ-ֆաի ', դա նշանակում է ավար առանց մարտի)* իր Մարգարեյին *(Մուհամմեդին)* նրանցից *(այսինքն, Ինչ Բանու Ան-Նադիր Հրեաները թողել են իրենց ետևից, և չեն վերցրել իրենց հետ Մուսուլմանների պաշարումից հետո)* –դուք *(Օ, Մուսուլմաններ)* չեք ստացել դրանք ոչ հեծելազորով կամ ուղտերի զորքով *(դուք չեք արել որևէ հետազոտություն, այսինքն, դուք ստացել եք նրանց առանց մարտի)*: Բայց Ալլահը ուղարկել է Իր Մարգարեներին տալով նրանց հզորություն, ում վրա Նա ցանկանում է *(այսպիսով, կարծես հաղթելու է նա ում որ Ալլահն է Կամենում)*: Եվ Ալլահը Ի վիճակի է անել ամեն բան: ﴾

7. ﴿ Ինչ Ալլահը տվեց որպես ավար *(Ալ-Ֆաի)* Իր Մարգարեյին քաղաքի մարդկանցից, դա Ալլահի համար է, Նրա Մարգարեյի *(այսինքն, պիտի ծախսվի մուսուլմանների շահերի համար)*, բարեկամների *(Մարգարեյի բարեկամները Բանու Հաշիմը և*

*Բանու Ալ-Մութալիբը, որին Մարգարեն արգելել է ընդունել Զաքյա)*, որբերի, Ալ-Մասակին *(կարիքավորների)*, և ճանապարհորդների *(ով, օտար է և վերջացել է գումարը)*, որպեսզի այն չդառնա ունեցվածք, որ կսահի *(բացառիկ ձևով)* ձեր միջի հարուստների ձեռքում: Եվ ինչ որ Մարգարեն տալիս է քեզ *(հրամայում է քեզ)*, վերցրու *(արա այդ)*; և ինչ նա արգելում է քեզ, խուսափիր դրանից *(մի արա այդ)*: Եվ վախեցիր Ալլահից ; իրոք, Ալլահը դաժան է պատժում: ﴿

8. ﴾ *(Եվ նույնպես կա բաժին այս ավարում)* աղքատ ներգաղթյալների համար *(Ով արտագաղթել է Մեքքայից Մեդինա:)*, ովքեր վտարվել են իրենց տներից և իրենց ունեցվածքից *(Մեքքայի անհավատներից)*, փնտրելով Աջակցություն Ալլահից և շահելու Նրա գոհունակությունը, և օժանդակելով Ալլահին *(այսինքն, օժանդակելու Նրա կրոնի հաղթանակին)* և Նրա Մարգարեյին: նրանք իրոք ճշմարիտներ են *(այսինքն, նրանք անում են ինչ ասում են)*: ﴿

9. ﴾ Եվ նրանք *(Ալ-Անսար–Օժանդակողներ–Մեդինայի բնակիչներ)* ովքեր, նրանցից առաջ *(ներգաղթյալներ –Մուհաջիրին)*, ունեյին իրենց տները *(Մեդինայում)* և որդեգրել էին Հավատքը *(մինչ Մուհագիրինների ներգաղթելը)*, սիրիր նրանց, ովքեր ներգաղթել են նրանց մոտ, և չունեն նախանձ իրենց սրտերում ինչ տվել են *(Մուհաջիրիններին, Բանու Ան- Նադիրի ավարից)*, և նրանք գերադասում են նրանց *(Ներգաղթյալներին)* իրենցից առավել, նույնիսկ չնայած, նրանք կարիքի ունեյին դրա: Եվ ով փրկված է իր սեփական ընչաքաղցությունից, դրանք նրանք են, ովքեր կլինեն հաջողակ: ﴿

10. ﴾ Եվ նրանք, ովքեր եկել են *(Իսլամ)* նրանցից հետո *(Անսարներից և Մուհաջիրիններից)*, ասա, ‘‘Մեր Տեր, Ներիր մեզ և մեր եղբայրներին, ովքեր նախորդել են մեզ Հավատքում, և մի դիր որևէ ատելություն մեր սրտերում ընդդեմ հավատացյալների: Մեր Տեր, Դու իրոք, Ռաուֆ *(Բարությամբ լի)*, Ռահիմ *(Ամենաբարգութն)* ես: ﴿

11. ﴾ Դու չես տեսել *(Օ, Մուհամեդ)* փարիսեցիներին *(Մեքքայի անհավատները)*, ովքեր ասել են իրենց եղբայրներին *չհավատալով*, նրանք, ովքեր չհավատացին Գրերի մարդկանց միջից *(այսինքն, Բանու Ան –Նադիր Հրեաները)*: ‘‘*(Ալլահով)*, եթե դուք վտարվեք *(Մուսուլմանների կողմից)*, մենք *(նույնպես)* իրոք, կգնանք ձեզ հետ և մենք երբեք չենք ենթարկվի որևէ մեկին ընդդեմ ձեզ, *(ով կասի մեզ, չաջակցել ձեզ և դուրս չգալ ձեր հետ)*; և, եթե նրանք կռվեն ձեր դեմ, մենք իրոք, կաջակցենք ձեզ հաղթանակի համար.’’ Բայց, Ալլահը Վկա է, որ նրանք իրոք խաբեբաներ են *(ինչ նրանք խոսք են տվել Բանու Ան-Նադիր Հրեաներին)*: ﴿

12. ﴾ Եթե նրանք *(Բանու Ան- Նադիր Հրեաները)* վտարվեն, *(իրոք)*, նրանք *(փարիսեցիները)* երբեք չեն հեռանա նրանց հետ *(ինչպես նրանք խոստացել են)*՝ և եթե նրանց վրա հարձակվեն, նրանք երբեք չեն աջակցի նրանց հաղթանակի համար: Եվ *(նույնիսկ)* եթե նրանք աջակցեն նրանց, նրանք *(փարիսեցիները)* կշրջեն իրենց մեջքերը *(նրանք կփախչեն պարտված)*, և հետո, նրանք չեն լինի հաղթանակած: ﴿

13. ﴾ Իրոք, դուք *(Օ, Մուսուլմաններ)* ավելի շատ եք վախենում նրանց *(փարիսեցիների')* սրտերի համար, քան Ալլահը *(քան նրանց վախը Աստծոց)*: Դա այն պատճառով է, որ նրանք մարդիկ են, ովքեր չեն ըմբռնում *(Ալլահի Մեծությունը և հզորությունը, և նրանք չեն վախենում Նրա պատժից)*: ﴿

14. ﴾ Նրանք *(չեն)* կռվի ձեր դեմ նույնիսկ միասին *(համախմբված)*, բացի ամրոցային քաղաքներից կամ պատերի ետևից: Նրանց թշնամությունը իրար մեջ դաժան է: Դուք կարծում եք նրանք միասնական են, բայց *(փաստորեն)* նրանց սրտերը բաժանված են: Դա այն պատճառով է, որ նրանք մարդիկ են, ովքեր չեն հասկանում: ﴿

15. ﴾ Նրանք *(Բանու Ան-Նադիր հրեաները)* նման են *(կապված ինչ Ալլահի պատիժն է արել նրանց)*, իրենց անմիջական նախնիներին *(այսինքն. Մեքքայի անհավատներին և Բանու քայնուքայի Հրեաներին)*; նրանք փորձեցին իրենց վարքի չար արդյունքները *(նրանց թշնամությունը Ալլահի և Մարգարեյի դեմ)*, և *(Հանդերձյալ կյանքում)* նրանք կունենան տանջալից պատիժ: ﴿

16. ﴾ *(Փարիսեցիները, Մեքքայի անհավատները, որ համոզել են Բանու Ան-Նադիր հրեաներին կռվել Մարգարեյի դեմ և խոստացել են նրանց, որ նրանք կաջակցեն նրանց)* կրկնօրինակում են Շեյթանի *(Սատանայի)*օրինակը, երբ նա ասում է մարդուն *(համոզելու նրան)*: ''Մի հավատա.'' Բայց, երբ *(մարդը)* չի հավատում, ապա Շեյթանը *(Սատանան)* ասում է: ''Ես ազատ եմ ձեր արարքներից, իրոք, ես վախենում եմ Ալլահից, աշխարհների *(մարդկության, ջիների և ամեն գոյության)* Տիրակալից: ﴿

17. ﴾ Այսպիսով, երկուսի վերջը կլինի, որ նրանք կլինեն Կրակում *(նրանք կբնակվեն այնտեղ)* հավերժ: Այսպիսին է պատիժը Ազ-Զալիմունների (*այսինքն, անարդար, սխալ անող բազմաստվածների, Ալլահին և նրա Միակությանը չհավատացողների)*: ﴿

18. ﴾ Օ, դուք, ովքեր հավատացել եք. Վախեցեք Ալլահից *(պահեք Նրա հրամանները և ետ կանգնեք նրա արգելքներից):* Եվ թող ամեն անձ տեսնի ինչ է նա արել *(լավ և վատ արարքներ աշխարհիկ կյանքում)* որպեսզի վաղը *(երբ նա կներկայանա նրանց հանդերձյալ կյանքում)*, և վախեցեք Ալլահից: Իրոք, Ալլահը Քաջատեղյակ է ինչ դուք անում եք: ﴿

19. ﴾ Եվ մի եղեք ինչպես նրանք, ովքեր մոռացել են Ալլահին *(այսինքն, չեն ենթարկվում Ալլահին)*, և Նա *(Ալլահը)* ստիպում է նրանց մոռանալ իրենք իրենց *(պատճառ է հանդիսանում նրանց մոռանալ անել առաջինի արարքներ, որոնք կփրկեն նրանց Կրակի պատժից).*Դրանք են Ֆասիքուն *(որ շեղվել են Ալլահի ուղղուց, ճնշողներ, որ պնդում են իրենց մեղքին)*: ﴿

20. ﴾ Հավասար չեն *(հավասար ճակատագրի)* Կրակի բնակիչները *(ովքեր կպատժվեն)* և Դրախտի բնակիչները *(ովքեր կունենան օրհնություն)*: Դրախտի բնակիչներն են, որ կլինեն հաղթողներ: ﴿

21. ﴾ Մենք ուղարկել ենք այս Ղուրանը լեռան վրա *(և այն կարող է հասկանալ ինչ է գրած, Դրախտի խոստումը և Կրակի զգուշացումը)*, դուք անպատճառ տեսել եք այդ *(չնայած իր ուժի, չափի և կոշտության, )*, հնազանդ և խոնարհված Ալլահի վախից: Այսպիսի այլաբանություններ Մենք դնում ենք մարդկությանը, որ նրանք կարողանան ենթադրել *(և մտածել)*: ﴿

22. ﴾ Նա Ալլահն է, չկա ուրիշ աստված բացի Նրանից, տեսանելիի և անտեսանելիի Ամենաիմացյալը: Նա Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*, Առ –Ռահիմ *(Ամենաողորմածն )*.է: ﴿

23. ﴾ Նա Ալլահն է և չկա ուրիշ աստված բացի Նրանից, Ալ-Մալիք *(ամենի Թագավոր)*, Ալ-Քուդուս *(Սուրբ և Բարձրյալ)*, Ալ-Սալամ *(Մեկը, ով զուրկ է ամեն անկատարությունից –Խաղաղություն)*, Ալ-Մումին *(Մեկը, ով տարբերում է Իր Մարգարեներին հրաշքներով և նշաններով–ապահովություն Տվողը)*, Ալ-Մուհեյմեն *(Իր արարածներին դիտողը)*, Ալ-'Ազիզ *(Ամենահզոր, Անպարտելին)*, Ալ-Ջաբար *(Մեկը, ում Կամքը միշտ գերակշռում է և Ում բոլոր արարածները ենթարկվում են)*, Ալ-Մութաքաբիր *(Մեկը, ով հպարտ է իր Մեծությամբ)*. Փառաբանված և Գերագույնն է Ալլահը, վեր ամեն ինչից,որ նրանք զուգակցում են ինչպես զուգընկեր Նրան: ﴿

24. ﴾ Նա Ալլահն է, Ալ –Խալիք *(Ստեղծող)*, Ալ-Բարի' *(Մեկը, ով տալիս է արարածին իր համապատասխան ձևը, ըստ առաքելության, ինչ յուրաքանչյուր արարածը կստանա)*, Ալ-Մուսայիր *(ձևերի ստեղծողը)*: Նրան է պատկանում Ալ-Ասմա' Ալ-Հուսնա *(Ամենագեղեցիկ Անունները)*: Ամենը ինչ երկնքում և երկրի վրա է փառաբանում են Նրան *(նրանք փառաբանում են Ալլահի Անունը խոսքերով, որ մերժում են ամեն անկատարելիություն Նրան)*: Եվ Նա Ալ-'Ազիզ *(Ամենահզոր, անպարտելին)*, Ալ-Հակիմ *(Ամենաիմաստունն)* է. ﴿

## Սուրա 60 Ալ-Մումթահանահ [Փորձության ենթարկվող կինը]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Օ, դու, ով հավատում է. Մի վերցրու Իմ թշնամիներին և քո թշնամիներին *(այսինքն, անհավատներին և բազմաստվածներին Մեքքայի)* ինչպես Աուլիյա' *(ընկերներ, պաշտպաններ)*, ցույց տալով կապվածություն նրանց *(և ասելով նրանց նորություններ Մարգարեի և Մուսուլմանների մասին)*, մինչ նրանք չեն հավատացել նրան, ինչ եկել է ձեզ ճշմարտությունից, *(այսինքն, Իսլամական Միաստվածությունը, Ղուրանը և Մուհամմեդը)*, և հանել են Մարգարեյին *(Մուհամմեդին)* և ձեզ *(ձեր տներից Մեքքայում)*, *[միայն]* որովհետև դուք հավատում եք Ալլահին, ձեր Տիրոջը: Եթե դուք դուք ընդառաջեք *(արտագաղթել և)*ջանաք հանուն Ինձ, և փնտրեք Իմ Գոհությունը, *(ապա, մի վերցրեք նրանց ինչպես Աուլիյա')*: Պահպանիր գաղտնի ընկերություն նրանց հետ, մինչ Ես Լիատեղյակ եմ

ինչ դուք թաքցնում եք և ինչ դուք բացահայտում եք: Եվ ով, ձեզանից անում է այդ, ապա իրոք նա շեղվել է Ճիշտ Ուղղուց.﴾

2. ﴿Նրանք կարող են ձեռք բարձրացնեն Ձեր վրա, նրանք կլինեն *(կվերաբերեն ինչպես)* թշնամիներ ձեզ, և չարությամբ լցված՝ Ձեր դեմ կուղղեն իրենց լեզուներն ու ձեռքերը կտարածեն առաջ իրենց ձեռքերը և լեզուները ձեր դեմ չարությամբ *(սպանելով, առևանգելով և վիրավորելով ձեզ)*, և նրանք ցանկանում են, որ դուք չհավատաք: ﴾

3. ﴿ Ոչ քո բարեկամները, ոչ քո երեխաները չեն օգնի ձեզ *(որովհետև, Մուսուլմանը բերել է Մուսուլմանին նորություն անհավատներին, փոխարենը նրանց համար, չվնասել իր բարեկամներին Մեքքայում)*, և Հարության Օրը, Նա *(Ալլահը)* կդատի ձեր միջև: Եվ Ալլահը Ամենատեսն է, ինչ դուք անում եք.: ﴾

4. ﴿ Ճշմարիտ կա հոյակապ օրինակ քեզ համար Իբրահիմի մեջ, *(Աբրահամ)* և նրանք, նրա հետ *(հավատացյալներ)*, երբ նրանք ասում են իրենց մարդկանց: "Ճշմարիտ, մենք ազատ ենք ձեզանից և ինչ որ դուք երկրպագում եք բացի Ալլահից, մենք մերժել ենք ձեզ, և հայտնվել է մեր և ձեր միջև թշնամություն և ատելություն ընդմիշտ, մինչ դուք կհավատաք Ալլահին միայն." - բացի *(այս օրինակից)* Իբրահիմի *(Աբրահամի)* ասածը իր *(ոչ հավատացյալ)* հորը, *(որովհետև նա ասաց նրան, մինչ համոզվելը, որ նա Ալլահի թշնամին է, և երբ նա համոզվեց,, ապա նա մերժեց նրան)*: "Ճշմարիտ Ես կխնդրեմ թողություն *(Ալլահից)* քեզ համար, բայց ես չունեմ որևէ բան քեզ համար Ալլահից *(նշանակում է ես չեմ կարող ոչ օգնել քեզ, ոչ պաշտպանել քեզ որևէ բանում Ալլահից)*:" "Մեր Տեր. Քեզ ենք *(Միայն)* մենք ապավինում *(մեր ամեն ինչում)*, և Քեզ ենք *(Միայն)* մենք շրջվում զղջումով, և դեպի Քեզ է *(Միայն)* *(մեր վերջնական)* նպատակավայրը *(Հարության Օրը)*." ﴾

5. ﴿ Մեր Տեր. Մի դարձրու մեզ Ֆիտնաh *(փորձություն)* անհավատների համար *(նշանակում է: թույլ մի տուր նրանց հաղթել, և ուստի ասա, "Եթե նրանք Ճիշտ ուղղու վրա էին, մենք չէնք հաղթի նրանց", այսպիսով, որ նրանց անհավատությունը աճում է)*, և ներիր մեզ, Մեր Տեր, Ճշմարիտ, Դու, միայն Դու, Ալ--'Ազիզ *(Ամենահզոր, Անպարտելի)*, Ալ-Հաքիմ *(Ամենաիմաստուն ես)*: ﴾

6. ﴿ Ճշմարիտ նրանց մեջ *(Իբրահիմի և նրա հետ հավատացյալների)* կար հոյակապ օրինակ ձեզ համար հետևելու, – ով, որ ցանկանում է *(հանդիպում)* Ալլահի հետ և Վերջին Օրվա: Եվ, ով շրջվում է *(չի հետևում Իբրահիմի օրինակին, վերցնում է անհավատներին, ինչպես Աուլիյա)*, ապա, Ճշմարիտ, Ալլահը Ալ-Ղանեյն *(Հարուստ, Կարիքներից զուրկ)* է, Ալ-Համիդ *(Արժանի բոլոր Փառաբանումներին)*.﴾

7. ﴿ Միգուցե, Ալլահը կդնի ընկերություն ձեր և նրանց միջև, ում դուք վերցնում եք ինչպես թշնամիներ *(միգուցե, Նա կբացի նրանց սրտերը առ Իսլամ)*: Եվ Ալլահը Քադիր *(Կարող)* *(այս սրան և ուրիշ բաների)* *է*, Եվ Ալլահը Ղաֆուր *(Ամենաներող)*, Ռահիմ *(Ամենաբարեգութ)* *է*: ﴾

8. ﴾ Ալլահը չի արգելում ձեզ վերաբերվել արդար և բարի նրանց հետ *(անհավատների),* ովքեր չեն կռվում ձեր դեմ կապված կրոնի հետ, ոչ էլ նրանց, ովքեր քշում են ձեզ ձեր տներից: Ճշմարիտ, Ալլահը սիրում է արդարների *(նրանց, ովքեր վերաբերվում են արդար ձևով)* ﴿

9. ﴾ Ալլահը միայն արգելում է ձեզ ի հաշիվ նրանց, կռվում են ձեր դեմ կապված կրոնի հետ, և քշում են ձեզ իրենց տներից, և օգնում են դուրս քշել ձեզ, վերցնել նրանց ինչպես Աուլիյա' *(ընկերներ, պաշտպաններ, պահապաններ և թեքվել դեպի նրանց սիրով և օգնելու նրանց, Մուսուլմանների դեմ)*: Եվ, ով վերցնում է նրանց ինչպես Աուլիյա' *(օգնականներ Մուսուլմանների դեմ)*, այսպիսիք են Զալիմուն *(անարդար, սխալվողներ, Ալլահին չենթարկվողներ)*: ﴿

10. ﴾ Օ, դու, ով հավատում է. Երբ հավատացյալ կանայք գալիս են քեզ մոտ որպես ներգաղթյալներ, քննիր նրանց *(փորձիր նրանց, պարզելու ճիշտը նրանց Հավատքը)*; Ալլահը ավելի լավ գիտի, նրանց հավատքը հետո, եթե դու համոզվես, որ նրանք ճշմարիտ հավատացյալներ են, մի ուղարկիր ետ նրանց անհավատների մոտ *(ամուսինների)*: նրանք օրինական չեն *(կանայք)* անհավատների համար, *(ամուսիններին)*, ոչ էլ անհավատներն են *(ամուսինները)* օրինական նրանց համար: Եվ տուր նրանց *(անհավատ ամուսիններին)* ինչ *(օժիտ)* նրանք ծախսել են *(տվել են նրանց)*: Եվ չի լինի մեղք ձեր վրա ամուսնանալ նրանց, եթե դուք վճարել եք նրանց օժիտը: *(Նույնապես)*, մի պահեք անհավատ կնոջը ինչպես կին, և խնդրեք *(վերադարձնել)* ինչ դուք ծախսել եք *(ինչպես օժիտ)*: Եվ թույլ տվեք նրանց *(անհավատներին)* ետ խնդրել այն ինչ նրանք ծախսել են *(ինչպես օժիտ կնոջ համար, որը ընդունել է Իսլամ)*. Դա Ալլահի Դատաստանն է, Ով դատում է ձեր միջև *(կապված այս խնդրի հետ)*: Եվ Ալլահը Ալիմ *(Ամենագետն)* է, Հակիմ *(Ամենաիմաստունն)* է: ﴿

11. ﴾ Եվ եթե ձեր կանանցից որևէ մեկը գնացել է ձեզանից, անհավատների մոտ *(ուրացել է Իսլամը, և անհավատները մերժել են տալ քեզ ետ օժիտը դու վճարել ես նրանց)*, և հետո դու հաղթել ես *(անհվատներին մարտում)*; ապա տուր *(ավարից, որ դու ստացել ես անհավատներից)* նրանց, ում կանայք գնացել են, համարժեքը, ինչ նրանք ծախսել են *(իրենց օժիտից)*: Եվ վախեցիր Ալլահից,Ում դու հավատում ես: ﴿

12. ﴾ Օ, Մարգարե. Երբ հավատացյալ կանայք գալիս են քեզ մոտ տալու քեզ Բիահ *(խոսք,, հավատարմության երդում)*, որ նրանք չեն զուգակցի որևէ բան *(երկրպագման)* Ալլահի հետ, որ նրանք չեն գողանա, որ նրանք չեն անի անօրինական սեռական գործողություն, որ նրանք չեն սպանի իրենց երեխաներին, որ, նրանք չեն կեղծ վերագրի իրենց ամուսիններին երեխաներ որոնք նրանցը չեն *(կամ որդեգրված, կամ ծնված ապօրինի)*, և որ նրանք կենթարկվեն քեզ ցանկացած Մառուֆում *(լավ բան, որ դու հրամայում ես նրանց)*: Ապա, ընդունիր իրենց Բայահը *(խոսքը, հավատարմության երդումը)* և խնդրիր Ալլահին ներել նրանց: Ճշմարիտ, Ալլահը Ղաֆուր *(Ամենաներող)*, Ռահիմ *(Ամենաբարեգութն)* է: ﴿

13. ﴾ Օ, դու, ով հավատում է, Մի վերցրու ինչպես Աուլիյա՛ *(ընկերներ պաշտպաններ, պահապաններ, օգնականներ)* մարդկանց, ում վրա է Ալլահի Անեծքը, ում մերժվել է *(ընդունել որևէ բարիք)* Հանդերձյալ Կյանքում, այնպես, ինչպես թաղված անհավատներն են մերժված *(ընդունելու Ալլահի Գթասրտությունը, և վերադառնում են աշխարհիկ կյանքին, այնպես, որ նրանք ունենան հնարավորություն զղջալ և ուղղել իրենց անհավատությունը).* ﴿

## Սուրա 61 Աս-Սաֆ [Տող/Աստիճան]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*,Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Ով երկնքում է և ով երկրի վրա է, փառաբանում է Ալլահին *(նրանք փառաբանում են Ալլահի անունը բառերով, որ մերժում է որևէ անկատարելություն Նրան)*: Եվ Նա Ալ-՛Ազիզ *(Ամենահզոր, Անպարտելին)*, Ալ-Հակիմ *(Ամենաիմաստունն)* է: ﴿

2. ﴾ Օ, դու, ով հավատացել է. Ի՞նչու ես դու ասել այդ, ինչ դու չես արել: *(սա զգուշացում է նրան, ով երբևէ ասում է որևէ բան և անում է այլ կերպ, ինչպես մի կտոր խորհուրդ, կամ ընդհանրապես չի անում այդ, ինչպես խոստում).*﴿

3. ﴾ Ամենաատելին Ալլահին այն է, որ դու ասում ես այն, ինչ դու չես անում. ﴿

4. ﴾ Ճշմարիտ, Ալլահը սիրում է նրանց, ովքեր կռվում են հանուն Իրեն շարքերով *(տողերով)* կարծես, եթե նրանք կուռ կառուցվածք են *(այսինքն, զինվորներ իրար կողք են, կազմելով անկոտրուն կառուցվածք)*: ﴿

5. ﴾ Եվ *(հիշիր)*, երբ Մուսան *(Մովսեսը)* ասաց իր մարդկանց. "Օ, իմ մարդիկ. Ինչու՞ եք դուք ինձ վնասում *(խոսքերով և արարքներով)* մինչ դուք գիտեք, որ ես Ալլահի Մարգարեն եմ ձեզ համար":"Այսպիսով, երբ նրանք շեղվեցին *(Ճշմարտությունից, մինչ գիտեյին այդ, և պնդեցին այդ)*, Ալլահը շեղեց նրանց սրտերը *(ընդունելու Առաջնորդություն, ինչպես պատիժ, նրանց Ճշտից թեքվելու համար)*: Եվ Ալլահը չի առաջնորդում մարդկանց, ովքեր Ֆասիքին են *(ովքեր մերժում են ենթարկվել Նրան, ովքեր պնդում են մեղք գործելուն)*: ﴿

6. ﴾ Եվ *(հիշիր)*, երբ ՛Իսան *(Հիսուս)*, Մարիամի *(Մերի)* որդին, ասաց. "Օ, Իսրայելի որդիներ. Ես Ալլահի Մարգարեն եմ ձեզ համար, հաստատելու Թաուրա *(Թորա, որը եկել է Մովսեսին)* ինձանից առաջ, և տալով *(ձեզ)* պարզ լուրեր *(գալուստի)* Մարգարեյի, ինձանից հետո, ում անունը կլինի Ահմեդ *(Մարգարե Մուհամեդի մյուս անունը)*": Բայց, երբ նա *(Ահմեդ, այսինքն Մուհամեդը)* եկավ նրանց մոտ պարզ ապացույցներով, նրանք ասացին. "Սա պարզ հրաշք է:." ﴿

7. ﴾ Եվ ո՞վ ավելի անարդար է քան նա, ով գտնում է ստեր Ալլահի մասին, *(զուգակցում է ընկեր Ալլահին երկրպագման մեջ)*, մինչ կոչվում է առ Իսլամ: *(այսինքն, Կոչված նվիրել իր երկրպագումը Միայն Ալլահին)*: Եվ Ալլահը չի առաջնորդում անարդար մարդկանց *(բազմաստվածներին և անհավատներին)*: ﴿

8. ❮ Նրանք ցանկանում են դուրս դնել Ալլահի Լույսը *(Ղուրանը)* իրենց բերաններով *(իրենց ստերով)*: Բայց Ալլահը կդարձնի Իր Լույսը ամբողջական *(այսինքն, Նրա կրոնը կշարունակվի և կտևի հավերժ, և ոչինչ չի կանգնեցնի այն)*, չնայած նույնիսկ անհավատները ատում են *(այդ)*: ❯

9. ❮ Նա, այն է Ով ուղարկել է Իր Մարգարեյին *(Մուհամմեդին)* առաջնորդությամբ *(Ղուրանով)* և ճշտի կրոնով *(Իսլամով)* դարձնելու այն հաղթական մյուս բոլոր կրոններին, նույնիսկ չնայած կռապաշտները ատում են *(այդ)*: ❯
10. ❮ Օ, դուք ովքեր հավատում եք. Առաջնորդե՞մ ձեզ գործարքի, որը կփրկի ձեզ ցավոտ պատժից: ❯

11. ❮ Որ դուք հավատաք Ալլահին և Նրա Մարգարեյին *(Մուհամմեդին)* և որ դուք ջանաք և պայքարեք հանուն Ալլահին ձեր ունեցվածքով և ինքներդ ձեզանով: Դա լավ կլինի ձեզ համար *(քան աշխարհիկ առևտուրը)*, եթե միայն դուք իմանայիք ❯

12. ❮*(Եթե դուք անեք այդպես)* Նա կների ձեզ, ձեր մեղքերը, և կընդունի ձեզ Այգիներ *(Դրախտ)* որի տակ գետեր են հոսում, և հաճելի բնակություն այգիներում *(Դրախտում)* ՙԵդեմում · այս իրոք մեծ հաջողություն է: ❯

13. ❮ Եվ նույնպես *(Նա կտա ձեզ)* ուրիշ *(օրհնանք)*, որը դուք սիրում եք –հաղթանակ Ալլահից *(ձեր թշնամիների դեմ)* և մոտիկ բացում *(հաղթանակ- մտնելով Մեքքա հաղթականորեն, առանց մարտի կամ պատերազմի)*: Եվ տուր *(Օ, Մուհամմեդ)* ավետիս *(հաղթանակ և օգնություն աշխարհիկ կյանքում և Դրախտ Հանդերձյալ կյանքում)* հավատացյալներին: ❯

14. ❮ Օ, դու, ով հավատում է. Եղիր աջակից *(Կրոնում)* Ալլահի, ինչպես ՙԻսան *(Հիսուսը)*, Մարիամի *(Մերիի)* որդին, ասաց իր հետևորդներին: "Ովքե՞ր են իմ աջակիցները *(Կրոնում)* Ալլահի:" Հետևորդները ասացին "Մենք ենք քո աջակիցները *(Կրոնում)* Ալլահի:" Հետո Իսրայելի որդիների մի խումբ հավատացին և խումբ *(նրանցից)* չհավատաց *(ասելով արհամարհելի խոսքեր Հիսուսի և նրա մոր մասին)*: Այսպիսով, Մենք *(այսինքն, Ալլահը)* աջակցեց նրանց, ովքեր հավատացին *(որ, Հիսուսը Մարգարե և Ալլահի ստրուկ էր, Մուհամմեդի մարգարեությամբ, այնուհետ, նա հաստատեց իրենց հավատքը Հիսուսի Մարգարեությունում)* ընդդեմ իրենց թշնամիների, և այսպիսով, նրանք դարձան հաղթական *(բարձրագույն)*: ❯

## Սուրա 62 Ալ-Ջումա [Ուրբաթ]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*,Առ –Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ❮ Ով երկնքում է և ով երկրի վրա է,փառաբանեք Ալլահին *(նրանք փառաբանում են Ալլահի անունը բառերով, որ մերժեն որևէ անկատարելություն Նրան)*, Ալ –Մալիք *(ամենի Թագավոր)*, Ալ –Քուդուս *(Ամենասուրբ, Ով չունի անկատարալեություն)*, Ալ -ՙԱզիզի *(Ամենահզոր, Անպարտելի)*, Ալ –Հակիմ *(Ամենաիմաստուն)*.❯

2. ﴾ Նա է, Ով ուղարկեց անտառաճանաչների միջից *(Արաբների, ովքեր չէին կարողանում ոչ գրել, ոչ կարդալ,ոչ էլ նրանք ունեյին երկնային Գիրք Ալլահից)* Մարգարե *(Մուհամմեդ)* իրենց միջից *(և ամբողջ մարդկությանը)*, արտասանելով նրանց Իր Տարբերակները *(այսինքն, Ղուրանը)*, մաքրելով նրանց *(անհավատության և բազմաստվածության աղտից, կոռուպացված հավատքից և անբարոյականությունից)*, և սովորեցնելով նրանց Գիրք *(Ղուրան, Իսլամական օրենսդրությունը և Իսլամական օրենքները)* և իմաստությունը *(այսինքն, Աս – Սուննա: Մարգարե Մուհամմեդի մարգարեական սովորույթները)*: Եվ իրոք, նրանք եղել են առաջ *(Մուհամմեդի առաքելությունից)* բացահայտ սխալում: ﴿

3. ﴾ Եվ *(նույնպես տուր տեղեկացված օգուտներ)* ուրիշներին, նրանց միջից *(այսինքն, մուսուլմաններին, արաբներին կամ ոչ- արաբներին)*, ովքեր դեռ չեն միացել նրանց *(կրոնում, որովհետև նրանք դեռ չէին ծնվել, կամ չեն ընդունել Իսլամ)*: Եվ Նա *(Ալլահը)* Ալ՛Ազիզ *(Ամենահզոր, Անպարտելին)*, Ալ-Հակիմ *Ամենաիմաստունն)* է: ﴿

4. ﴾ Դա Ալլահի շնորհն է *(Մուհամմեդի առաքելությունը)*, որը, Նա դնում է, ում վրա Նա ցանկանում է *(Իր ստրուկներից)*: Եվ Ալլահը Հզոր Շնորհի Տիրակալն է: ﴿

5. ﴾ Նմանությունը նրանց, ովքեր վստահված էին *(պարտավորվածությամբ)* Թաուրայի *(Թորայի)* *(այսինքն, ենթարկվել նրա պատվիրաններին և գործնականի բերել նրա օրենքները)*, բայց, հետո, նրանք չվերցրեցին այն *(այսինքն, նրանք մերժեցին այդ, չցնելով նրա ուսմունքը գործնականի մեջ)*, նման է ինչպես ավանակի, որը կրում է գրքեր *(բայց, չի հասկանում, ինչ է գրված այնտեղ)*: Ինչ սարսափելի է օրինակը, ովքեր մերժում են Տարբերակը *(տարբերակները, ապացույցները, վկայությունները, նշանները պարզաբանումները)* Ալլահի *(նրանցից օգուտ քաղելու փոխարեն)*: Եվ Ալլահը չի առաջնորդում անարդար մարդկանց *(բազմաստվածների, անհավատների)*: ﴿

6. ﴾ Ասա *(Օ, Մուհամմեդ)*: "Օ, դուք, Հրեաներ, *(ովքեր դեռ մնում են իրենց կրոնին, որը դուք աղավաղել եք, և ոչ հավատում եք Հիսուսին, ոչ էլ Մուհամմեդին)*: Եթե դուք *(կեղծորեն)* հայտարարեք, որ դուք Աուլիյա եք *(ընտրյալ ազգ, սիրված մեկը)* Ալլահին, դուք մենակ, դուրս մղելով *(ամբողջ)* *(մնացած)* մարդկությունը, ապա երկար մահ, եթե դուք ճշմարիտ եք *(այսինքն. Խնդրեք հանդիպում Ալլահի հետ,հանդերձյալ կյանքում, որպեսզի ստանաք ձեր բարի պարգևը, ինչպես դուք հայտարարում եք, այս աշխարհիկ կյանքի փոխարեն)*: ﴿

7. ﴾ Եվ նրանք երբեք չեն երկարացնի դրա համար *(մահը)* *(և նրանք կգերադասեն աշխարհիկ կյանքը Հանդերձյալ կյանքի փոխարեն, վախենալով Ալլահի պատժից,)* ըստ ինչ *(արարքներ)* նրանց ձեռքերը արել են *(անհավատություն և չար արարքներ)*: Եվ Ալլահը գիտի լավ անարդար *(սխալ անողների, բազմաստվածների, անհավատների)* *(այսինքն, չկա ոչինչ նրանց անարդարություններից, թաքնված Ալլահից)*: ﴿

8. ﴾ Ասա *(նրանց)*: "Իրոք, մահը, որից դուք սահում եք, անպատճառ կհանդիպի ձեզ, *(երբ, ձեր ժամը գա)*, ապա, դուք կվերադարձվեք *(Դատաստանի օրը)* *(Ալլահին)*,

տեսանելիի և անտեսանելիի Ամենաիմացյալին, և Նա կպատմի ձեզ ինչ դուք սովոր էիք անել *(աշխարհիկ կյանքի ընթացքում)*: ﴾

9. ﴿ O, դուք, ովքեր հավատացել եք, *(Մուսուլմաններ)*! Երբ, աղոթքը հայտարարված է Ուրբաթ Օրը *(Սալաթ Ալ-Ջումա)*, եկեք առ Ջիքր Իլեհ *(այսինքն, Լսել կրոնական զրույց )* Խուտբա *(Ուրբաթ Օրվա և աղոթեք)*: Եվ թողեք առևտուրը *(և ամեն ուրիշ բան, որ դուք անում եք)*: Դա ավելի լավ է ձեզ համար, եթե դուք միայն իմանայիք: ﴾

10. ﴿ Եվ, երբ աղոթքը *(Ուրբաթ Օրվա)* ավարտվում է, ապա դուք կարող եք տարածվել երկրով մեկ *(որտեղ որ ցանկանում եք)* և փնտրեք Ալլահի Գոհունակությունը *(աշխատելով, և այլն.)*, և հիշեք Ալլահին շատ, որ դուք լինեք հաջողակ: ﴾

11. ﴿ Եվ, երբ նրանք *(որոշ Մուսուլմաններ)* տեսնեն որոշ առևտուր կամ որոշ զվարճանք, *(Թամբուրի (թմբուկի զարկ) և այլն, որը ուղեկցվում է առևտրական քարավանի ժամանմամբ)*, նրանք ցրվում են նրա միջով, և թողնում են քեզ *(օ, Մուհամեդ)* կանգնած *(մինչ դու տալիս ես Ջումայի կրոնական զրույցը (Խուտբան))*: Ասա: “Այն, ինչ Ալլահը ունի *(պարգև և երանություն ձեզ համար)* ավելի լավ է, քան որևէ զվարճանք կամ առևտուր: Եվ Ալլահը լավագույն մատակարարն է:”﴾

## Սուրա 63 Ալ-Մունաֆիքուն [Փարիսեցիներ]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Երբ, փարիսեցիները գալիս են քեզ մոտ *(O, Մուհամեդ)*, նրանք ասում են *(միայն իրենց լեզուներով)*: “Մենք վկայում ենք, որ դու իրոք Ալլահի Մարգարեն ես:” Ալլահը գիտի, որ դու իրոք Նրա Մարգարեն ես, և Ալլահը վկայում է, որ փարիսեցիները իրոք սուտասան են, *(որովհետև, նրանք ասում են մի բան իրենց լեզուներով, մինչ իրենց սրտերում, նրանք նկատի ունեն ուրիշ այլ բան)*: ﴾

2. ﴿ Նրանք դարձրել են իրենց երդումները քող *(իրենց փարիսեության համար)*: Այսպիսով, նրանք խոչընդոտում են *(մարդկանց)* Ալլահի Ճանապարհից: Իրոք, չարիքը այն է, ինչ նրանք սովոր են անել: ﴾

3. ﴿ Սա նրա համար է, որովհետև նրանք հավատացին *(միայն իրենց լեզուներով)* և հետո չհավատացին *(մերժեցին հավատքը իրենց մեջ)*,հետևաբար իրենց սրտերը կնքված են (*Ալլահի կողմից)*, այսպիսով, նրանք չեն հասկանում *(որտեղ է իրենց շահը)*: ﴾

4. ﴿ Եվ, երբ դու նայում ես նրանց, իրենց մարմինները *(տեսքը)* զոհացնում է քեզ· և երբ նրանք խոսում են, դու լսում ես իրենց խոսքերը *(շնորհիվ նրանց լեզուների պերճախոսության, մինչ իրենց սրտերը դատարկ են հավատքից և նրանց մտքերը դատարկ են հասկանալուց և օգտակար գիտելիքներից, և այսպես)*: Նրանք ինչպես փայտի կտորներ են հենված *(պատին,, որովհետև նրանք չեն կարող կանգնել իրենք իրենց, առանց արժեքի և խոռոչված ներսից)*: Նրանք կարծում են, որ ամեն կանչ

իրենց դեմ է *(որովհետև նրանք վախկոտ են)*: *(Փաստորեն)* Նրանք թշնամիներ են, այսպիսով զգուշացեք նրանցից: Թող Ալլահը անիծի նրանց: Ինչպե՞ս կարող էին նրանք շեղվել Ճիշտ Ուղղուց *(և գնալ փարիսության և սխալի ուղղով)*: ﴾

5. ﴿ Եվ, երբ նրանց ասում են: "Եկեք *(զղջմամբ)*, այնպես, որ Ալլահի Մարգարեն խնդրի թողություն *(Ալլահից)* ձեզ համար", նրանք թեքում են իրենց գլուխները, և դու կտեսնես նրանց, *(օ, Մարգարե)* հեռանալով քեզանից գոռոզությամբ: ﴾

6. ﴿ Նրանց միևնույնն է, արդյոք դու *(Օ, Մուհամեդ)* խնդրես թողություն նրանց համար, կամ չխնդրես թողություն նրանց համար, Ալլահը երբեք չի ների նրանց: Ալլահը չի առաջնորդում մարդկանց, ովքեր Ֆասիքուն են *(ովքեր շեղվել են Ալլահին ենթարկվելուց և պնդում են մեղքեր գործելուն)*: ﴾

7. ﴿ Նրանք, *(այդ փարսեցիները)* նրանք են, ովքեր ասում են *(Մեդինայի բնակիչներին, Ալ-Անսարներին)*: "Մի ծախսեք նրանց վրա, ովքեր Ալլահի Մարգարեի հետ են *(այսինքն, Մարգարեի հետևորդների, ովքեր արտագաղթեցին Մեքքայից Մեդինա)*, մինչ նրանք լքեն նրան:" Եվ Ալլահին է պատկանում երկնային և երկրային գանձերը, բայց փարսեցիները չեն հասկանում *(այդ)*: ﴾

8. ﴿ Նրանք *(փարիսեցիները)* ասում են, "Եթե մենք վերադառնանք Ալ-Մեդինա, իրոք ավելի արժանավորները *('Աբդ Ալլահը, Ուբայի որդին, Սալուլի որդին, Ալ-Մեդինայի փարիսեցիների ղեկավարը իր անդամներով)* կվտարեն ավելի ցածր խավին *(ցածր)* *(Մուհամեդին իր անդամներով)*:" Բայց պատիվը, *(և հզորությունը և փառքը)* պատկանում է Ալլահին, և Նրա Մարգարեին, և հավատացյալներին, բայց փարիսեցիները չգիտեն *(այդ)*: ﴾

9. ﴿ Օ, դուք, ովքեր հավատում եք: Մի թողեք, որ ձեր ունեցվածքը և ձեր երեխաները շեղեն ձեզ Զիքր Իլեհից *(Ալլահին հիշելուց և Նրան երկրպագելուց)*: Եվ ովքեր անում են այդ, ապա նրանք պարտվողներ են: ﴾

10. ﴿ Եվ ծախսեք *(բարեգործությանը)* այն բանից ինչից Մենք տվել ենք ձեզ, մինչ մահը կգա ձեզանից մեկի մոտ, և նա կասի, "Իմ Տեր, եթե միայն Դու տայիր ինձ հետաձգում *(իմ մահվան)* մի փոքր, ապա ես կտայի բարեգործություն, և կլինեի առաքինիների մեջ *(այսինքն, կանեի լավ արարքներ)*."﴾

11. ﴿ Եվ Ալլահը չի շնորհում հետաձգում ոչ մի հոգու, երբ իր նշված ժամանակը *(մահը)* գալիս է: Եվ Ալլահը Խաբիր *(Լավ տեղեկացված)* է ինչ դուք անում եք: ﴾

## Սուրա 64 Աթ-Թագաբուն [Ընդհանուր Կորուստ և Ձեռքբերում]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Ով երկնքում է և ով երկրի վրա է փառաբանում Ալլահին *(նրանք փառաբանում են Ալլահի անունը բառերով, որ մերժում է որևէ անկատարելություն Նրան)*: Նա է

Միակը, և Նրան է պատկանում ամբողջ գովքը *(և փառքը)*, և Նա Ի վիճակի է անել ամեն բան: ﴾

2. ﴿ Այդ Նա է, Ով ստեղծել է Քեզ, հետո ձեզանից ոմանք անհավատներ են և ձեզանից ոմանք հավատացյալներ:Եվ Ալլահը Բասիր *(Ամենատեսն) է,* ինչ դուք անում եք: ﴾

3. ﴿ Նա ստեղծել է երկինքը և երկիրը ճշտորեն *(մեծ իմաստությամբ)*, և Նա կեցվածք է տվել ձեզ և արել է լավ ձեր կեցվածքները: Եվ դեպի Նա է վերջնական Նպատակակետը *(բոլոր արարածների, որպեսզի պարգևատրի առաքինիներին և պատժի անհավատներին)*: ﴾

4. ﴿ Նա գիտի ինչ է երկնքում և երկրի վրա, և Նա գիտի ինչ դու թաքցնում ես և ինչ դու բացահայտում ես: Եվ Ալլահը Ամենագետն է,թե ինչ է կրծքավանդակում *(մարդկանց սրտում)*: ﴾

5. ﴿ Չի՞ հասել նորությունը ձեզ նրանց, ովքեր չեն հավատացել ձեզանից առաջ: Եվ այսպիսով, նրանք ճաշակել են իրենց անհավատության չար արդյունքը *(այս աշխարհիկ կյանքում)*, և նրանց համար *(Հանդերձյալ կյանքում)* կլինի ցավոտ պատիժ: ﴾

6. ﴿ Այդ *(ինչ պատահեց նրանց աշխարհիկ կյանքում, և ինչ կպատահի նրանց հանդերձյալ կյանքում) այն պատճառով է,* որ եկան նրանց մոտ, իրենց Մարգարեները բացահայտ ապացույցներով *(Նշաններով և Հրաշքներով)*, բայց նրանք ասացին *(մերժումով)*: "*(կարո՞ղ են լինել դա սոսկ)* մարդիկ *(ինչպես մենք, լինել նրանք, ովքեր)* առաջնորդեն մեզ:" Այսպիսով նրանք չհավատացին և թեքվեցին *(Ճշմարտությունից)*: Բայց Ալլահը կարիք չունի *(նրանց)*: Եվ Ալլահը Ղանիյ *(Կարիքներից զուրկ, Հարուստ)*, Համիդ *(արժանի բոլոր փառաբանումներին)* է: ﴾

7. ﴿ Անհավատները *(կեղծորեն)* հայտարարել են, որ նրանք հարություն չեն առնի *(երբևէ, Հատուցման համար)*: Ասա *(նրանց, օ Մուհամմեդ)*: "Այո, Իմ Տիրոջով, դուք *(հաստատ)* հարություն կառնեք, հետո, ձեզ կտեղեկացնեն *(և կփոխհատուցեն)* ամենի համար, ինչ դուք արել եք և դա հեշտ է Ալլահի համար: ﴾

8. ﴿ Ուստի, հավատացեք *(օ, կռապաշտներ)* Ալլահին և Նրա Մարգարեյին *(Մուհամմեդին)* և Լույսին *(այս Ղուրանին),* որը Մենք ուղարկել ենք ներքև *(երկիր)*: Եվ Ալլահը Խաբիր *(Լավ տեղյակ)* է ինչ դուք անում եք: ﴾

9. ﴿ *(Եվ հիշեք)* Օրը, երբ Նա կհավաքի ձեզ բոլորիդ, Հավաքի Օրը, - դա կլինի Թագաբուն Օրը *(այսինքն, անհավատների համար կորստի Օր և հավատացյալների համար նվաճման, քանզի անհավատները կտարբերվեն հավատացյալներից ընկնելով Դժոխք, մինչ հավատացյալները կմտնեն Դրախտ: Անհավատները կափսոսան կորցնելով Դրախտը, և հավատացյալները կափսոսան շատ ավելի լավ արարքներ չանելու համար):* Եվ նա, ով հավատում է Ալլահին և անում է առաքինի լավ արարքներ, *(Ալլահը)* կքավի նրանից նրա Սայաթը *(մեղքերը)*, և կընդունի նրան

*(Դրախտ)* որի տակ գետեր են հոսում, բնակվելու այնտեղ հավերժ; որը կլինի մեծ հաջողություն: ﴾

10. ﴿ Բայց նրանք, ովքեր չհավատացին և մերժեցին մեր *Այաթը (ապացույցները, վկայությունները, տարբերակները, դասերը, նշանները, լուսաբանումները, և այլն.)*, նրանք են Կրակի բնակիչները, նրանք կբնակվեն այնտեղ հավերժ: Եվ վատագույնն է, իրոք այդ նշանակետը: ﴾

11. ﴿ Ոչ մի թշնամություն չի տեղի ունենում *(որևէ մեկին)*, բացի Ալլահի Թույլատրությամբ *[այսինքն, Որոշմամբ և Քադարով (Աստվածային Նախորոշումներով)]*, և ով հավատում է Ալլահին, Նա առաջնորդում է նրա սիրտը *(ընդունելու Աստվածային Նախորոշումները և որ, ինչ պատահում է նրան, արդեն գրված է նրա համար Ալլահից:)*. Եվ Ալլահը ամեն ինչի Ամենատեղյակն է: ﴾

12. ﴿ Եվ ենթարկվեք *(Օ, մարդիկ)* Ալլահին, և ենթարկվեք Մարգարեյին *(Մուհամմեդին)*; բայց, եթե դուք թեքվեք *(ենթարկվելու Ալլահին և Մարգարեյին)*, ապա Մեր Մարգարեյի պարտքն է միայն հաղորդել *(Ուղերձը)* պարզ: ﴾

13. ﴿ Ալլահ: Չկա Աստված բացի Իրենից: Եվ Ալլահին *(Միայն)* թող հավատացյալները դնեն իրենց վստահությունը *(իրենց բոլոր գործերում)*: ﴾

14. ﴿ Օ, դուք, ովքեր հավատում եք: Իրոք, ձեր զույգերից և ձեր երեխաներից կան թշնամիներ ձեզ *(ովքեր կարող են կանգնեցնել ձեզ Ալլահին ենթարկվելու)*; ուստի զգուշացեք նրանցից *(և մի ենթարկվեք նրանց)*: Բայց, եթե դուք ներեք *(նրանց, առանց պատժելու իրենց մեղքերը)*, և անցնեք, և ներեք *(իրենց մեղավորությունները)*, քանի որ իրոք Ալլահը Ղաֆուր *(Ամենաներող)*,և Ռահիմ *(ամենաբարեգութ )* է: ﴾

15. ﴿ Իրոք, ձեր ունեցվածքը և ձեր երեխաները միայն Ֆիթնա են *(փորձություն ձեր համար)*, և Ալլահը ունի մեծ պարգև *(Դրախտ նրան, ով ենթարկվում է Ալլահին, ուրիշի փոխարեն)*: ﴾

16. ﴿ Այսիսով, վախեցեք Ալլահից այնքան շատ, որքան կարող եք *(այսինքն, Իրագործեք Նրա Պատվիրանները, հուսալով Նրա պարգևին, և հեռու մնացեք ինչը Նա արգելել է, վախենալով Նրա պատժից)*; և լսեք *(Մարգարեյին)* և ենթարկվեք *(նրա պատվիրաններին)*, և վատնեք *(բարեգործությանը)*; դա ավելի լավ է ձեզ համար: Եվ ովքեր փրկված են իրենց իսկ ընչաքաղցությունից, ապա նրանք հաջողակներ են: ﴾

17. ﴿ Եթե դուք, *(Օ, Մուսուլմաններ)* առատաձեռն պարտք տաք Ալլահին *(այսինքն, ծախսեք (բարեգործությանը Հանուն Ալլահի, բարությամբ և հավատարմությամբ)*, Նա կկրկնապատկի այն ձեզ համար, և կների ձեզ *(ձեր մեղքերի համար)*: Եվ Ալլահը Շակուր *(Շնորհակալ է նրանց, ովքեր ծախսում են բարեգործությանը աճեցնելով իրենց գործողությունները, և բազմապատկելով իրենց պարգևը)*, և Հալիմ *(Ամենահամբերատարն)* է: ﴾

18. ﴿ *(Ալլահը)* Ամենագետն է տեսանելիի և անտեսանելիի, Ալ-‘Ազիզ *(Ամենահզոր Անպարտելի)*, Ալ-Հակիմ *(Ամենաիմաստունն)* է: ﴾

## Սուրա 65 Աթ-Տալաք [Ամուսնալուծություն]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*,Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Օ, Մարգարե: Երբ դուք *(հավատացյալներդ)* ամուսնալուծվում եք *(ձեր)* կանանցից, ամուսնալուծվեք նրանց հետ *(հաշվեք)* իրենց *‘Իդդահը (նշված սպասման ժամանակահատվածը, որը սկսվում է այն պահից, երբ ամուսինը հայտարարում է ամուսնալուծություն, բանավոր ժամանակահատվածը, այն պայմանում, երբ կինը իր ամսականի ժամանակահատվածում չէ, հայտարարման ժամանակ և որ ամուսինը չի մերձեցել նրան, նրա նախորդ ամսականից սկսած, այսպիսով, որ նրանք կարողանան համոզված լինեն, արդյոք նա հղի է, թե ոչ)*, և հաշվարկեք ուշադիր *(ժամանակաշրջանը)* *‘Իդդահի* *(որովհետև, ժամանակահատվածի ընթացքում, ամուսինը կարող է չեղյալ համարել ամուսնալուծությունը և բերեք կնոջը ետ ամուսնության կարգավիճակի, և լրացուցիչ, կինը չի կարող ամուսնանալ ուրիշ մարդու հետ, մինչ չավարտվի ժամանակաշրջանը):* Եվ վախեցեք Ալլահից, ձեր Տիրոջից, *(Օ, Մուսուլմաններ)*:Եվ մի վտարեք նրանց իրենց տներից *(Իդդահի ժամանակ, կինը իրավունք ունի մնալ իր ամուսնու տանը և նա չի կարող դուրս անել նրան)*, ոչ էլ նրանք իրենք չեն կարող հեռանալ *(Իդդահի ժամանակ)*, բացի այն դեպքի, երբ նրանք մեղավոր են որևէ բացահայտ վատ արարքում *(անօրինական սեքսուալ գործողության)*: Եվ սրանք սահմաններ են *(օրենքներ)* սահմանված Ալլահից: Եվ ով ոտնահարում է Ալլահի կողմից սահմանված սահմանները, ապա, իրոք նա իրեն է սխալ ուղղու է դնում: Դու, *(մարդ, ով ամուսնալուծվում է իր կնոջից)* չգիտես *(ինչ կարող է տեղի ունենալ)*, հնարավոր է դրանից *(ամուսնալուծությունից)* *հետո, Ալլահը* անի որևէ բան *(որը դու չես սպասում, ինչպես, զգալ ափսոսանք կամ նոր ցանկություն քո կնոջ նկատմամբ)*: ﴾

2. ﴿ Եվ երբ նրանք *(համարյա)* հասել են իրենց նշված ժամանակահատվածին, կամ վերադարձրեք նրանց *(ամուսնական կյանքի)* լավ վերաբերմունքով *(վերաբերեք նրանց լավագույն ձևով և վաստեք նրանց համար)*, կամ վերաբերեք նրանց լավ ձևով *(տվեք նրանց, բոլոր իրենց իրավունքները, առանց բացարձակ վնասելու նրանց)*: Եվ վերցրեք երկու վկա, ազնիվ մարդկանց, ձեզանից *(Մուսուլմաններ)*: Եվ *(Օ, վկաներ)* հաստատեք վկայություն Ալլահի համար *(ասեք ճիշտը, կարծես դուք կանգնած եք Նրա առջև)*: Այդ *(ինչ Ալլահը հրամայել է)* կլինի հորդոր նրան, ով հավատում է Ալլահին և Վերջին Օրվան: Եվ ով վախենում է Ալլահից *(պահելով Նրա Պատվիրանները և խուսափելով Նրա արգելքներից)*, Նա կտա ճանապարհ նրան *(լուծում)* դուրս գալու *(ամեն դժվարությունից)*: ﴾

3. ﴾ Եվ Նա կապահովի նրան *(բարիքներով)* որտեղից նա չի սպասում: Եվ ով դնում է իր վստահությունը Ալլահի վրա, ապա Նա կապահովի նրան: Իրոք, Ալլահը կլրացնի Նրա Նպատակը: Ճշմարիտ, Ալլահը սահմանել է չափ ամեն ինչի համար: ﴿

4. ﴾ Եվ այն ձեր կանանց, ովքեր անցել են ամսականի *(ժամանակաշրջանի)* *տարիքը*, նրանց համար *'Իդդահը (նշված ժամանակը)*–եթե դուք կասկածում եք *(իրենց ժամանակաշրջանին)*– երեք ամիս է; և *(նույնը վերաբերում է)* նրանց,ովքեր դեռ չունեն ամսական *(այսինքն, նրանք դեռ անհասուն են: Նրանց 'Իդդահը նմանապես երեք ամիս է)*: Եվ նրանց համար, ովքեր հղի են, նրանց *'Իդդահը (նշված ժամանակահատվածն է)* մինչ ծննդաբերությունը; և ով վախենում է Ալլահից *(պահելով նրա Պատվիրանները և խուսափելով Նրա արգելքներից)*, *(Ալլահը)* կդարձնի նրա գործը հեշտ նրա համար *(այս կյանքում և Հանդերձյալ կյանքում)*: ﴿

5. ﴾ Դա Ալլահի հրամանն է *(կապված ամուսնալուծության և 'Իդդահի հետ)*, որը Նա ուղարկել է *(երկիր)* քեզ և ով վախենում է Ալլահից *(պահելով նրա Պատվիրանները և խուսափելով Նրա արգելքներից)*, *(Ալլահը)* կհեռացնի նրանից իր մեղքերը, և կմեծացնի նրա պարգևը: ﴿

6. ﴾ Տնավորեք նրանց *(ամուսնալուծված կանանց իրենց 'Իդդահի ժամանակ)*, որտեղ դուք բնակվում եք, ըստ ձեր կարողությունների *(այսինքն, Դուք պարտավոր եք ծախսել նրանց վրա ըստ ձեր կարողության)*, և մի վնասիր *(եղբայր)* նրանց, այսպես ուղղելու նրանց *(որ, նրանք զոհ լինեն թողնել քո տունը)*: Եվ, եթե նրանք հղի են, ապա ծախսիր նրանց վրա մինչ նրանք ծննդաբերեն: Եվ, եթե *(ծննդաբերությունից հետո)* նրանք կրծքով կերակրեն երեխաներին ձեր համար, տվեք նրանց իրենց արժանի վճարը, և խորհրդակցեք միմյանց հետ բարությամբ *(և արդար ձևով)*: Բայց, եթե դուք հասնում եք դժվար կետի *(այսինքն, դուք համաձայն չեք և տատանվում եք, օրինակ, եթե մայրը մերժում է կերակրել նորածինին, կամ նա խնդրում է անպատեհ քանակությամբ գումար անելու այդ)*, ապա ուրիշ կանայք կարող են կերակրել նրան *(երեխային)*: ﴿

7. ﴾ Թող հարուստ մարդը ծախսի *(իր ամուսնալուծված կնոջ և իր երեխայի համար)* ըստ իր մտադրության; և մարդը, ում աղբյուրները սահմանափակ է, թող նա ծախսի ըստ նրա, ինչ Ալլահն է տվել: Ալլահը չի դնում ծանրություն որևէ մեկի վրա, բացի ինչ տվել է նրան: Դժվարությունից հետո Ալլահը կպարգևի հանգստություն: ﴿

8. ﴾ Եվ շատ քաղաքներ *(բնակիչներ)* չենթարկվեցին *(գոռոզաբար)* իրենց Տիրոջը և Նրա Մարգարեյի Հրամանին; և կկանչենք դաժան հաշվի *(այսինքն, տանջանք աշխարհիկ կյանքում)*, և Մենք կպատժենք սարսափելի պատժով *(Դժոխքում Հանդերձյալ կյանքում)*: ﴿

9. ﴾ Այսպիսով, այն փորձում է չարիքի արդյունքը այդ գործողության *(անհավատության)*, և այդ գործողության *(անհավատության)* համարժեքն է կորուստը, *(ավերում այս կյանքում և հավերժ պատիժ Հանդերձյալ կյանքում)*: ﴿

10. ﴾ Ալլահը պատրաստել է նրանց համար դաժան պատիժ: Այսպիսով, վախեցեք Ալլահից *(պահելով Նրա պատվիրանները և խուսափելով Նրա արգելքներից)*, Օ, դուք, հասկացողներ, ովքեր հավատացել են: Իրոք, Ալլահը ուղարկել է *(երկիր)* ձեզ Հիշեցում *(այս Ղուրանը)*: ﴿

11. ﴾ *(Եվ նույնպես ուղարկել է ձեզ)* Մարգարե *(Մուհամմեդին)*, ով արտաբերել է ձեզ Ալլահի տարբերակները *(Ղուրանը)*, որը պարզաբանում է *(ձեզ ինչ ճիշտ է և ինչ սուտ է, և ունի պարզ բացատրություններ)*, որ Նա կվերցնի նրանց, ովքեր հավատացել են և արել են առաքինի, լավ արարքներ, խավարից *(բազմաստվածությունից և անհավատությունից)*, *(և առաջնորդել է նրանց)* դեպի լույս, *(Իսլամական Միաստվածությունը)*: Եվ ով հավատում է Ալլահին և անում է առաքինի, լավ արարքներ, Նա կբնակեցնի նրան Այգիներում *(Դրախտում)*, որի ներքո գետեր են հոսում, բնակվելու այնտեղ հավերժ: Ալլահը իրոք պարգևել է նրան *(հավատացյալին)* հիանալի նախապատրաստում *(Դրախտում)*: ﴿

12. ﴾ Դա Ալլահն է, Ով ստեղծել է յոթ երկինքներ և երկիր նմանապես *(այսինքն, յոթ)*: Նրա Հրամանը իջնում է նրանց միջև *(երկինքներ և երկիր)*, որ դու կարողանաս իմանալ, որ Ալլահը ունի հզորություն ամենի վրա, և որ Ալլահը շրջապատում է ամեն բան *(Իր)* Գիտելիքներում: ﴿

## Սուրա 66 Աթ –Թահրիմ [Արգելք ]

Ալլահի անունով, Առ-Ռահմեն *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Օ, Մարգարե: Ինչու՞ ես դու արգելել *(քեզ համար)* այն,ինչ Ալլահը թույլատրել է քեզ, փնտրելով գոհացնել քո կանանց: Եվ Ալլահը Ղաֆուր *(Ամենաներողն)*, Ռահիմ *(Ամենաբարեգութն)* է: ﴿

10. ༺ Կխրատվի միայն նա, ով վախենում է *(Ալլահից և սիրում է Նրան:)* ༻
11. ༺ Եվ կխուսափի դրանից, *(քո խրատից)*, թշվառը, ༻
12. ༺ Ով կմտնի Մեծ Կրակ *(այրվելու այնտեղ)*, ༻
13. ༺ Այնտեղ նա կլինի ոչ մահացած, *(լինելով հանգստում),* ոչ էլ կենդանի: ༻
14. ༺ Իրոք, ով մաքրում է իրեն *(խուսափելով բազմաստվածությունից և ընդունում է Իսլամական Միաստվածությունը)* հաջողության կհասնի, ༻
15. ༺ Եվ հիշատակում է *(փառաբանելով)* իր Տիրոջ Անունը և աղոթում է: ༻
16. ༺ Ոչ, *(օ մարդիկ)* դուք գերադասում եք աշխարհիկ կյանք, ༻
17. ༺ Չնայած Հետագան ավելի լավն է և տևական: ༻
18. ༺ Իրոք, այս *(ինչ Մենք նշել ենք այստեղ զգուշացումներից և նորություններից)* *(նույնպես գրված են իրենց իմաստներով)* նախորդ Գրերում, ༻
19. ༺ Աբրահամի և Մովսեսի Գրերում: ༻

## (88) Սուրա Ալ-Ղաշիյահ [Հարության Օրը, որը ապշեցնում է իր սարսափելի բաներով]

Ալլահի Անունով, Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ༺ Հասե՞լ է արդյոք ձեզ Ալ- Ղաշիյահ նորությունը *(այսինքն, Հարության Օրը, որը ապշեցնում է մասրդկանց իր սարսափներով:)* ༻

2. ﴾ Որոշ դեմքեր, այդ Օրը կլինեն նվաստացած *(այսինքն, բոլոր անհավատների դեմքերը)*: ﴿
3. ﴾ Աշխատող *(ջանասիրաբար)* և հյուծված *(աշխատանքից)*, ﴿
4. ﴾ Նրանք կմտնեն այրվելու ուժգին տաք Կրակում, ﴿
5. ﴾ Նրանց կտան ըմպելու եռացող աղբյուրից: ﴿
6. ﴾ Նրանց համար չի լինի ոչ մի սնունդ, բացառությամբ դառը, թունավոր փշոտ բույսից, ﴿
7. ﴾ Որը, ոչ սնուցում, ոչ էլ օգուտ է տալիս քաղցին: ﴿
8. ﴾ *(Այլ)* դեմքեր այդ Օրը կլինեն ուրախ *(երանությունից, որ նրանք ստացել են)*, ﴿
9. ﴾ Իրենց ջանքերի համար *(բարի արարքների,, որ գործել են աշխարհիկ կյանքում)* նրանք կբավարարվեն *(Հանդերձյալ կյանքում, պարգևով, որը նրանք ստացել են)*, ﴿
10. ﴾ Բարձր Դրախտում, ﴿
11. ﴾ Որտեղ նրանք չեն լսի Լագու *(վատ, սին, վնասող խոսակցություն:)* ﴿
12. ﴾ Այնտեղ կլինի հոսող աղբյուր: ﴿
13. ﴾ Այնտեղ կլինեն գահեր *(մահիճներ)* բարձրացված: ﴿
14. ﴾ Եվ գավաթներ սահմանված վայրերում *(այսինքն, պատրաստված ցանկացողների համար, )* ﴿
15. ﴾ Եվ բարձեր սահմանված շարքերով *(մեկը մյուսի կողք)*: ﴿
16. ﴾ Եվ, շքեղ գորգեր ամենուր տարածված: ﴿
17. ﴾ Արդյո՞ք նրանք *(անհավատները)* *չեն նայում* *(այսինքն, տեսնում)* *ուղտերին*, *(և մտորում),* *թե ինչպես են նրանք արարվել:* ﴿
18. ﴾ Եվ երկնքին, թե ինչպես է այն բարձրացել: ﴿
19. ﴾ Եվ լեռներին, թե ինչպես են նրանք սրված և սահմանված *(կանգնեցված, արմատավորված և ամուր հաստատված, կանգուն պահելու երկիրը իր բարձր արագությամբ շարժումից:)* ﴿
20. ﴾ Եվ, երկրին, թե ինչպես է այն տարածվել *(և պատրաստվել մարդկանց համար ապրելու դրա վրա:)* ﴿
21. ﴾ Այսպիսով, խրատիր *(և հիշեցրու)* նրանց *(Օ Մուհամմեդ)*, իրոք, դու միակն ես, ով խրատում է *(և հիշեցնում)*, ﴿
22. ﴾ Դու իշխող չես *(տիրապետող, կառավարող, բռնապետ)* նրանց *(այսինքն, դու չես կարող ստիպել նրանց հավատալ և կրոնում չկա պարտադրանք)*. ﴿
23. ﴾ Սակայն, ինչպես մեկը, ով շրջվել է և չի հավատացել *(պնդելով իր անհավատությունը, )* ﴿
24. ﴾ Ապա Ալլահը կպատժի նրան մեծ տանջանքով: ﴿

25. ﴿ Իրոք, Մերը կլինի նրանց վերադարձը: ﴾
26. ﴿ Այնուհետ, իրոք Մերը կլինի նրանց հաշիվը: ﴾

## (89) Սուրա Ալ-Ֆաջր[Արշալույս]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ *(Ես երդվում եմ)* արշալույսով: ﴾
2. ﴿ Եվ տաս գիշերներով *(Լուսնային ամսվա Դհի Էլ-Հիջջահ առաջին տաս գիշերներով)*, ﴾
3. ﴿ Եվ Աշ-Շաֆով *(զույգով)* և *Ալ-Ուաթրով* *(կենտով)*, *(այսինքն, աղոթքներով, որոնք բաղկացած է չորս կամ երկու Ռաքյա խոնարհումից և ուրիշներով, որոնք բաղկացած են երեքից կամ մեկից) (այն նույնպես կարող է նշանակել Ալ-Աղեհա օր, Դհի Էլ-Հիջջահի տասներրորդ օրը, որը զոհաբերության օր է և Արաֆայի օրը, նույն ամսվա իններորդ օրը, )* ﴾
4. ﴿ Եվ գիշերով, երբ այն հեռանում է: ﴾
5. ﴿ Արդյո՞ք չկա այնտեղ *(վերոհիշյալ երդումներում)* բավարար երդում նրա համար, ով ունի ուղեղ *(այնպես որ համոզվի:)* ﴾
6. ﴿ Դու չես տեսել *(Օ Մուհամմեդ)*, ինչպես է քո Տերը գործել *(և կործանել)* *՝Ադին* *(Հուդ Մարգարեյի մարդկանց)*;﴾
7. ﴿ *(Ովքեր ցեղից կամ քաղաքից էին)* Իմրանի, որոնք ունեին *(բարձր)* սյուներ *(կառույցներ և Ալլահը նրանց դարձրել էր հսկաներ, ովքեր ունեյին մեծ ուժ, )* ﴾
8. ﴿ Որի նմանը *(ցեղախմբի կամ ազգի կամ քաղաքի)* երբեք չի արարվել երկրի վրա: ﴾
9. ﴿ Եվ, *(նույնպես դուք չեք տեսել, թե ինչպես է ձեր Տերը գործել և կործանել)* *Թամուդ* *(Մարգարե Սալիհի ազգին)*, ովքեր փորել էին ժայռեր *(լեռներ)* հովիտում *(կացարան կառուցելու:)* ﴾
10. ﴿ Եվ *(նույնպես, դուք չե՞ք տեսել, ինչպես ձեր Տերը գործել է և կործանել)* փարավոնին, ով ուներ ցցեր*(որոնց վրա նա տանջում էր մարդկանց) (կամ նա, ով ուներ զինվորներ, ովքեր հաստատում էին նրա բռնապետական կանոնը, կարծես նրանք ցցեր էին)*: ﴾
11. ﴿ Նրանք *(այսինքն, Ադը, Թամուդը և Փարավոնը)*, ովքեր կեղեքում էին *(և բռնակալներ էին) (իրենց)* երկրներում, ﴾
12. ﴿ Եվ անում էին այնտեղ *(իրենց երկրներում)* շատ կոռուպցիա *(չարիք և վատություն, )* ﴾

13. ﴾ Այսպիսով, ձեր Տերը թափեց նրանց վրա խարազանը տանջանքի: ﴿
14. ﴾ Իրոք, ձեր Տերը Մշտական Դիտորդ է *(տեսնում է և լսում ամենը, ինչ նրանք անում են և հետաձգում է նրանց պատիժը, սակայն երբ Նա վերցնում է նրանց, Նա պատժում է նրանց շատ խիստ:)* ﴿
15. ﴾ Ինչ վերաբերում է տղամարդուն, երբ նրա Տերը փորձում է նրան, տալով պատիվ և առատաձեռնություն *(ունեցվածք, զավակներ, իշխանություն և այլն)*, ապա, նա ասում է *(ցնծությամբ)*. “Իմ Տերը ինձ պատվել է”*(կարծելով, որ Ալլահը տվել է նրան այդ առատաձեռնությունը որպես նշան, որ Նա գոհ է նրանից և նա լավ ստրուկ է, ով արժանի է դրան:)* ﴿
16. ﴾ Սակայն, երբ Նա փորձում է նրան՝ կաշկանդելով կյանքի պայմանները, նա ասում է.“Իմ Տերը ինձ նվաստացրեց” *(կարծելով, որ Ալլահը, արեց այդ, որպես նշան, որ Նա գոհ չէ նրանից և նա վատ ստրուկ է, ով արժանի չէ Ալլահի բարեհաճությանը:)* ﴿
17. ﴾ Ոչ, *(այդ այնպես չէ, որ Ալլահը տալիս է առատաձեռնություն լավ մարդկանց և հակառակը, ոչ, միգուցե Ալլահը տալիս է առատաձեռնություն վատ մարդկանց և ստիպում է նրանց պատճառ լինել իրենց աղետին:)* Իրոք *(Պատիվը, Ալլահին հնազանդվելն է և նվաստացումը, Նրան չհնազանդվելը, սակայն,)* դուք չեք վերաբերում որբերին բարությամբ և մեծահոգությամբ, ﴿
18. ﴾ Եվ, ոչ էլ կոչ եք անում միմյանց կերակրել աղքատներին, ﴿
19. ﴾ Եվ դուք կուլ եք տալիս բոլորի ժառանգությունը մեծ ագահությամբ *(չմտածելով արդյոք այն օրինական է, թե ոչ, այսինքն, վերցնում եք ձեր բաժինը և ուրիշ մարդկանց բաժինը, ինչպիսիք են կանայք, երեխաները և ընդհանուր առմամբ թույլերը, զրկելով նրանց իրենց ժառանգության իրավունքից:)* ﴿
20. ﴾ Եվ դուք սիրում եք ունեցվածք շատ մեծ սիրով *(այսպիսով, դուք չեք վատնում դրանից Ալլահի ճանապարհին, բարեգործությամբ, աղքատների համար և այլն:)* ﴿
21. ﴾ Ոչ, սակայն, երբ երկիրը *(ուժգին շարժվում է և)* փշրվում և հարթաչափվում է *(դառնալով առանց բարձրությունների, լեռների կամ դաշտավայրերի և իր մասերը կոտրում են միմյանց:)* ﴿
22. ﴾ Եվ ձեր Տերը գալիս է *(դատելու արարածներին)*, և հրեշտակներին կարգով, շարք առ շարք, ﴿
23. ﴾ Եվ այդ Օրը Դժոխքը կբերվի մոտիկ *(կներկայացվի)*, այդ Օրը մարդը կհիշի *(ինչ է նա արել աշխարհիկ կյանքում)*, սակայն, ինչպե՞ս այդ հիշողությունը *(ապա)* կօգնի նրան: ﴿

24. ﴾ Նա կասի. "Ավաղ, եթե ես ներկայացնեի *(բարի արարքներ աշխարհիկ կյանքում, այնպես, որ դրանք օգնեին ինձ)* իմ կյանքում *(Հետագայում:)*" ﴿
25. ﴾ Այսպիսով, այդ Օրը, ոչ ոք չի պատժի, ինչպես Նա *(Ալլահը)* կպատժի *(այդքան խիստ)*: ﴿
26. ﴾ Եվ ոչ ոք, չի կապի *(այդքան խիստ, )* որքան Նա կկապի *(անհավատներին և թույլերին:)* ﴿
27. ﴾ *(Բարեպաշտներին կասվի),* "Օ *(դուք)* վստահեցված հոգիներ, *(որոնք լիակատար հանգստության և բավարարման մեջ են, )* ﴿
28. ﴾ "Վերադարձեք դեպի ձեր Տերը, գոհացած *(Ալլահի պարգևներով)* և գոհացնելով *(Նրան, որովհետև դուք բարի արարքներ եք գործել աշխարհիկ կյանքի ընթացքում, )* ﴿
29. ﴾ "Մտեք դուք, ապա, Իմ *(պատվելի)* ստրուկների շարքերը, ﴿
30. ﴾ "Եվ մտեք դուք Իմ Դրախտը:"﴿

## (90) Սուրա Ալ-Բալադ[Քաղաք]

Ալլահի Անունով, Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Ես երդվում եմ այս *(Սուրբ, Նվիրված)* Քաղաքով *(այսինքն, Մեքքայով, որտեղ արգելված է որևէ մեկին սպանել որևէ մեկին կամ որևէ բան)* – ﴿
2. ﴾ Որտեղ *(կամ մինչ)* դու *(Օ Մուհամեդ)* ապրում ես այնտեղ *(արաբերեն բառ, որը թարգմանվում է որպես 'ապրելու վայր', կարող է նաև նշանակել 'զերծ' այսինքն, որտեղ դու զերծ ես ամեն մեղքից, եթե դու պատժես քո թշնամիներից մեկին- Ֆատեհ Մեքքայի օրվա ընթացքում, այն օրը դու կմտնես Մեքքա հաղթական, առանց մարտի կամ պատերազմի: Այդ Օրը Մարգարեն հաստատեց Մեքքայի մարդկանց, որ նրանք չեն ստանա որևէ վնաս, չնայած նրանց արաքների նրան և մուսուլմաններին,նախկինում, չարչարելով և դատապարտելով նրանց շատ տարիներ, և նա հրահանգեց մուսուլմաններին չմարտնչել որևէ մեկի հետ, բացառությամբ, եթե որևէ մեկը հարձակվի առաջինը, սակայն, նա հրահանգեց նրանց փնտրել չորս առանձնահատուկ մարդկանց և սպանել նրանց, այն բանի համար, ինչ նրանք արել էին նախկինում ընդդեմ Իսլամի և մուսուլմանների: Արաբերեն բառը կարող է նաև նշանակել 'որտեղ Մեքքայի անհավատներին թույլատրվում է սպանել ձեզ, չնայած այն Սուրբ Քաղաք է:' Այսպիսով, ինչպե՞ս ստացվեց, որ նրանք դարձրեցին այն Սուրբ, չհարձակվելու մարդկանց կամ

*նույնիսկ կենդանիների վրա, մինչ նրանք մոռացել են այս Սրբության մասին և ցանկանում են սպանել ձեզ այնտեղ ներսում:),* ﴾

3. ﴾ *(Ես երդվում եմ)* *արական ծնողով* և նրանով, ինչ նա ծնում է *(այն կարող է նշանակել Ադամը, մարդկության հայրը, կամ Աբրահամը, Մեքքայի մարդկանց հայրը, երբ նա ընտրեց այս անմարդաբնակ վայրը իր որդի Իսմայիլի և իր կնոջ Հաջարի համար ապրելու և նրա սերունդներից եկան այս Քաղաքի բնակիչները և նրանց մեջ էր Մարգարե Մուհամեդը, այն նույնպես կարող է նշանակել 'ցանկացած հայր' մարդկանցից կամ կենդանիներից և այլն, քանի դեռ ծնողը և նրա ծնածը Ալլահի կարողության նշաններն են, ով առաջացրեց մարդկանց և կենդանիներին թույլ սերմնահեղուկից կենդանի, լսելու և տեսնելու զգայարաններով:)* ﴾
4. ﴾ Իրոք, Մենք արարել ենք մարդուն աշխատանքում *(այսինքն, նա կհանդիպի դժվարությունների աշխարհիկ կյանքում աշխատանքից և փորձություններից և այլն:Աշխատանքի արաբերեն բառը կարող է նաև նշանակել հաստատությամբ կամ ուղիղ կանգնած, այսինքն Մենք արարել ենք մարդուն կատարյալ ձևով և ուղիղ մարմնով, գլուխը բարձր, ոչ ինչպես կենդանիներ, գլուխները մարմիններին հավասար:)* ﴾
5. ﴾ Արդյո՞ք նա կարծում է, որ ոչ ոք չի հաղթահարի նրան *(կառավարի և գերիշխի նրան և պատժի նրան, եթե նա վատ արարք է արել:)* ﴾
6. ﴾ Նա ասում է *(սնապարծորեն)*. "Ես ծախսել եմ ունեցվածքը առատությամբ:"﴾
7. ﴾ Արդյո՞ք նա կարծում է, որ ոչ ոք չի տեսել նրան *(Արդյո՞ք նա կարծում է, որ Ալլահը չի տեսել նրան, մինչ նա ծախսում էր այդ գումարը, և որ Ալլահը չի դատի նրան, թե որտեղից է նա ստացել այդ գումարը, լավ կամ վատ միջոցով և որտեղ է նա ծախսում այդ գումարը, լավ կամ վատ ճանապարհով:)* ﴾
8. ﴾ Արդյո՞ք մենք չենք տվել նրան երկու աչք, ﴾
9. ﴾ Եվ լեզու և երկու շրթունք: ﴾
10. ﴾ Եվ ցույց տվել նրան երկու *(ակնհայտ)* ուղիներ *(բարին և չարը, այնպես, որ ընտրի, թե որն է նա հետևելու)*: ﴾
11. ﴾ Սակայն, արդյո՞ք նա կանցնի Ալ-Աքաբան *(խոչընդոտը կամ դժվար ճանապարհը, սակայն այստեղ այն նշանակում է.'Բարի արարքների ճանապարհը', որը խոչընդոտի կամ դժվար ճանապարհի նման է լեռան վրա, որը ոչ ոք չի կարող անցնել, բացառությամբ նրա, ով ունի ազնիվ մտադրություն: Այսպիսով, արդյո՞ք նա կանցնի այն, դառնալու բարեպաշտ ստրուկներից մեկը:)* ﴾

12. ﴾ Եվ ինչպե՞ս դու կարող ես իմանալ, *(այսինքն, դու չես կարող պատկերացնել, օ Մուհամմեդ)* որքան *(հզոր և կարևոր է)* այս ՙ*Աքաբան* *(Արաբերեն արտահայտություն, որը օգտագործվում է ընդգծելու որևէ իսկապես կարևոր բան:)* ﴿
13. ﴾ Գլխի ազատում է *(այսինքն, ստրուկի, որին ազատում ես, եթե նա քեզ է պատկանում, կամ դու գնում ես ստրուկ, որպեսզի ազատես նրան կամ ազատում ես պատանդի առանց որևէ փրկագնի, այլ ազատում ես նրան հանուն Ալլահի, )*, ﴿
14. ﴾ Կամ սնունդ տալն է, այն օրը, երբ դաժան քաղց է *(սով)*, ﴿
15. ﴾ Որբին, ով ազգական է *(այնպես, որ դու ստանում ես պարգև սնունդ տալով դաժան սովի ժամանակ, գումարած պարգև ազգակցական կապերը պահելու համար, )*, ﴿
16. ﴾ Կամ կարիքավորի, ով վերածվել է ոչնչի *(այսինքն, թշվառությունից և անհրաժեշտությունից)*, ﴿
17. ﴾ Այնուհետ, նա *(ով կատարում է վերոհիշյալ ամենը)* *դառնում է* նրանցից մեկը, ով հավատում և հորդորում է մեկը մյուսին հաստատակամություն *(ենթարկվելու Ալլահի Պատվիրաններին բարի արարքներում)* և համբերության *(փորձությունների ժամանակ և զերծ մնալ վատ արարքներից և վատ ցանկություններից)*, և *(նույնպես)* հորդորում մեկը մյուսին խղճմտանքի և կարեկցության *(դեպի բոլոր արարածները, մարդիկ, կենդանիները, շրջակա միջավայրը և այլն:)* ﴿
18. ﴾ Նրանք այն մարդիկ են, ովքեր Աջ Ձեռքում են *(այսինքն, Դրախտի բնակիչները)*, ﴿
19. ﴾ Սակայն, նրանք ովքեր չեն հավատացել Մեր Այաթների *(Տարբերակներին, նշաններին, ապացույցներին)* նրանք, Ձախ Ձեռքում գտնվողներն են *(այսինքն, Դժոխքի բնակիչները:)* ﴿
20. ﴾ Ում, Կրակը կլինի մոտիկ *(այսինքն, Կրակը կրջապատի նրանց և չի լինի ոչ մի լույս կամ զովացուցիչ ըմպելիք, կամ պատուհան, կամ ելք և նրանք կմնան այնտեղ հավերժ, առանց հանգստի և նրանք երբեք դուրս չեն գա այնտեղից:)* ﴿

## (91) Սուրա Աշ-Շեմս [Արևը]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ *(Ես երդվում եմ)* արևով և նրա Դուհայով *(այսինքն, պայծառությամբ այն ժամանակ, երբ արևը սկսում է երևալ բարձր և դրա լույսը սկսում է տարածվել)* *(արևի պայծառությունը Ալլահից մեծ Նշան է, այն տալիս է մարդկանց իսկայական*

*քանակությամբ էներգիա, էլեկտրականության փոխարեն, այն տալիս է ջերմություն, ոչ մի բույս չի կարող աճել առանց այդ լույսի և այլն,)* ﴿

2. ﴾ Լուսնով, երբ այն հետևում է դրան *(արևին, )* ﴿
3. ﴾ Ցերեկով, քանի որ այն ցույց է տալիս դրա *(արևի)* պայծառությունը *(այսինքն, մենք կարող ենք տեսնել լույսը, որը գոյություն ունի Երկրի վրա, միայն երկու հարյուր կիլոմետր; այդ սահմանում Արևը նման է երկնագույն սկավառակի, սակայն երբ դրա ճառագայթները հաղորդվում են մթնոլորտի հետ, ապա մթնոլորտը ցույց է տալիս Արևի լույսը, փոխակերպելով դրա ճառագայթները լույսի, որը ցրված է, ինչպես մենք տեսնում ենք այն:)* ﴿
4. ﴾ Գիշերով, քանի որ այն թաքցնում է այդ *(այսինքն, Արևի լույսը, քանի որ գիշերը քողարկում է իր խավարով երկրի մասը, որից Արևը առանձնացել է, թաքցնելով և մթագնելով Արևի լույսը այդ մասից:)* ﴿
5. ﴾ Երկնքով և Նրանով, Ով կառուցել է այդ, ﴿
6. ﴾ Երկրով և Նրանով, Ով տարածել է այդ: ﴿
7. ﴾ Հոգով *(մարդով կամ հոգով կամ Ադամով)* և Նրանով, Ով արարել և կատարյալ է դարձրել այն իր համամասնություններով, ﴿
8. ﴾ Եվ ոգեշնչել է այն, թե ինչ է անբարեպաշտությունը դրա համար և ինչ է բարեպաշտությունը դրա համար *(այնպես, որ տարբերեն չարի ուղղին բարու ուղղուց և ընտրեն, թե որը նա կհետևի)*: ﴿
9. ﴾ Իրոք, նա է հաջողակ, ով մաքրում է այն *(իր հոգին, իրեն բարությամբ, )* ﴿
10. ﴾ Եվ, իրոք, նա է ձախողվում, ով ներշնչում է այն *(կոռուպցիայում)*: ﴿
11. ﴾ Թամուդի *(մարդիկ)* զրպարտեցին *(իրենց Մարգարեյին, Սալեհին)* իրենց կեղեքումով *(անարդարությամբ, անհանազանդությամբ և ամբարտավանությամբ, )*, ﴿
12. ﴾ Երբ նրանց միջի ամենաթույլ մարդը առաջացավ *(սպանելու իգական ուղտին: Թամուդի մարդիկ հարցրեցին Մարգարե Սալեհին, ապացույց, որ նա մարգարե է Ալլահից, այսպիսով Ալլահը հանեց իգական ուղտը քարից, ինչպես հզոր ապացույց նրանց համար: Ալլահը հրահանգեց, որ մեկ օր իգական ուղտը կըմպի, մինչ մարդիկ չեն ըմպի այդ օրը և հաջորդ օրը մարդիկ կըմպեն և իգական ուղտը չի ըմպի և այդ անհանգստացրեց նրանց և նրանք ցանկացան սպանել այն:)* ﴿
13. ﴾ Սակայն Ալլահի Մարգարեն *(Սալեհը)* ասաց նրանց. “*(Զգուշացեք, վախեցեք չար ավարտից:)* Այդ է Ալլահի իգական ուղտը: *(Մի վնասեք այն)* և *(մի խոչընդոտեք այն ունենալու)* իր ըմպելիքը *(իր բաժին ջուրը իր օրը:)*” ﴿

14. ﴿ Այնուհետ, նրանք զրպարտեցին նրան և սպանեցին այն:Այսպիսով, իրենց Տերը կործանեց նրանց *(ճիչով)* իրենց մեղքերի պատճառով և Նա հավասարեցրեց նրանց պատժում *(այսինքն, կործանումը եկավ մեկին, ով սպանեց այն և նույնպես մյուս բոլորին, որովհետև նրանք համաձայնեցին այդ ոճրի հետ, այսպիսով նրանք այդ ոճրում նրա գործընկերներն էին:)* ﴾
15. ﴿ Եվ Նա *(Ալլահը)* չի վախենում դրանց հետևանքներից *(այսինքն, նրանք չեն կարող վնասել Ալլահին որևէ բանում, բացառությամբ իրենց չար արարքների, որոնք կործանեցին նրանց:.)* ﴾

## (92) Սուրա Ալ-Լեյլ [Գիշերը]

Ալլահի Անունով, Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ *(Ես երդվում եմ)* գիշերով, քանզի այն քողարկում է *(ցերեկը իր մթությամբ, )* ﴾
2. ﴿ Ցերեկով, երբ այն հայտնվում է *(պայծառությամբ)*, ﴾
3. ﴿ Նրանով, Ով արարել է տղամարդուն և կնոջը: ﴾
4. ﴿ Իրոք, ձեր ջանքերը և արարքները բազմազան են *(կապված ձեր նպատակների հետ, ձեզանից ոմանք փնտրում են Հետագայի պարգև և բարի արարքներ են անում ըստ դրա, մինչ որոշները փնտրում են աշխարհիկ կյանք առանց հուսալու Հետագայի պարգև և նրանք գործում են ըստ դրա:)* ﴾
5. ﴿ Ինչ վերաբերում է նրան, ով տալիս է *(բարեգործություն իր ունեցվածքից)* և *վախենում է Ալլահից* *(պահպանելով Նրա Պատվիրանները և խուսափելով Նրա արգելքներից, )* ﴾
6. ﴿ Եվ Ալ-Հուսնային հավատքը *(լավագույնն է, այսինքն հավատք, որ Ալլահը կփոխհատուցի նրան այն ամենի համար, որ նա ծախսել է բարեգործության մեջ և կպարգևատրի նրան իր բարի արարքների համար և նույնպես հավատում է Ալլահի Միակությանը և Նրա իրավունքին, երկրպագվելու որպես Միակ, )* ﴾
7. ﴿ Մենք կհարթեցնենք նրա համար ուղղին հեշտությամբ *(լավությամբ, այսինքն Մենք կառաջնորդենք նրան բարի ուղղի և բարի արարքներ:)* ﴾
8. ﴿ Սակայն, ինչ վերաբերում է նրան, ով մերժում է *(ագահ է)* և կարծում է իրեն ինքնաբավ *(և մտածում է, որ նա կարիք չունի Ալլահի կամ Նրա պարգևի, )*, ﴾
9. ﴿ Եվ զրպարտում է Ալ-Հուսնան *(այսինքն, զրպարտում է, որ Ալլահը կփոխհատուցի նրան, եթե նա ծախսի բարգործության մեջ իր ունեցվածքից և նույնպես զրպարտում է Ալլահի Միակությունը, )*, ﴾

10. ﴿ Մենք կհեշտացնենք նրա համար ուղղին դեպի դժվարություններ *(այսինքն, Մենք կհեշտացնենք թույլ մարդու համար ուղղին դեպի չարիք, որպեսզի նա արժանի լինի Ալլահի պատժին Հետագայում և Ալլահը երբեք չի առաջնորդում անիրավներին:)*.﴾
11. ﴿ Եվ ինչ օգուտ կտա նրա ունեցվածքը, երբ նա ընկնի *(Դժոխք)*: ﴾
12. ﴿ Իրոք, Մեզ վրա է առաջնորդություն տալը *(այսինքն, Մենք ենք ցույց տալիս բարի և չարի ճանապարհը)*: ﴾
13. ﴿ Եվ, իրոքՄեզ է պատկանում վերջին *(Հետագան)* և առաջինը *(այս աշխարհը)*: ﴾
14. ﴿ Հետևաբար, ես զգուշացնում եմ ձեզ բոցավառ Կրակից, ﴾
15. ﴿ Ոչ ոք չի մտնի այն այրվելու, բացառությամբ ամենաթշվառների, ﴾
16. ﴿ Ովքեր զրպարտել են *(Մարգարե Մուհամեդին)* և շրջվել են *(հավատքից)*: ﴾
17. ﴿ Եվ ամենաբարեպաշտները կհեռացվեն դրանից *(Կրակից)*, ﴾
18. ﴿ Նա, ով ծախսում է իր ունեցվածքից *(աղքատների համար)* *մաքրելու իրեն (մեղքերից և ագահությունից և այլն, և նույնպես մաքրելու իր ունեցվածքը, )* ﴾
19. ﴿ Եվ չկա ոչ ոք *(մարդկանցից, ով ստացել է իր բարեգործությունից)*, ով պարտական է նրան բարեհաճության, ետ վճարելու *(այսինքն, նա չի տալիս իր բարեգործությունից պարգևատրելու մարդկանց, ովքեր նրան բարեհաճություն են արել:Այս բարեգործությունը պետք է միայն նպատակ ունենա լինելու իրական, անկեղծ բարեգործություն աղքատ մարդկանց համար, և ոչ թե փոխանակող բարեհաճություն)*: ﴾
20. ﴿ *(Նա շահ չունի այս բարեգործությունից)*: Բացառությամբ փնտրելու իր Տիրոջ Հայացքը, Ամենաբարձրյալի *(այսինքն, ծախսել միայն հանուն Ալլահի և հուսալ Նրա պարգևին)*: ﴾
21. ﴿ Եվ, անշուշտ նա կգոհանա *(երբ նա մտնի Դրախտ)*: ﴾

## (93) Սուր Ադ-Դուհա [Կեսօրից առաջ]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ *(Ես երդվում եմ)* Ադ-Դուհայով *(այսինքն, ժամանակով, երբ արևը սկսում է երևալ վերևում և նրա լույսը սկսում է տարածվել, )* ﴾
2. ﴿ Գիշերով, երբ մթագնում է *(և դրա մթաքգնումը թանձրանում է:)* ﴾
3. ﴿ Իրոք, քո Տերը ոչ լքել է քեզ *(Օ Մուհամեդ)* ոչ էլ ատում է քեզ *(ինչպես Մեքքայի անհավատները ասացին, երբ հրեշտակ Գաբրիելը չեկավ լուսաբանմամբ Ալլահից,*

*Մարգարեյի մոտ որոշ ժամանակ և այնուհետ նրանք ասացին."O Մուհամեդ, քո Տերը լքել է քեզ")*: ﴿

4. ﴾ Եվ, իրոք Հանդերձյալ Կյանքը ավելի լավ է քեզ համար, քան աշխարհիկ կյանքը: ﴿
5. ﴾ Եվ իրոք, քո Տերը կտա քեզ *(առատությամբ Հետագայում)* այնպես, որ դու գոհանաս: ﴿
6. ﴾ Արդյո՞ք Նա *(Ալլահը) չի գտել քեզ (O Մուհամեդ)* որբ և տվել քեզ ապաստան *(և հոգացություն)* ﴿
7. ﴾ Եվ գտա՞վ ձեզ անտեղյակ *(այսինքն, դուք չգիտեք ինչ է հավատքը, ոչ էլ գիրը կամ ընթերցանությունը)* և առաջնորդեց ձեզ *(և սովորեցրեց ձեզ ինչ դուք չգիտեիք առաջ և առաջնորդեց ձեզ բարձրագույն բարոյականության և ամենաառաքինի արարքների:)* ﴿
8. ﴾ Եվ գտա՞վ ձեզ աղքատ և հարստացրեց *(ինքնաբավ և ինքնորոշված)*: ﴿
9. ﴾ Ուստի, ինչ վերաբերում է որբին, մի վերաբերվի նրան ճնշմամբ *(կամ կոպիտ, )* ﴿
10. ﴾ Եվ, ինչ վերաբերում է մուրացիկին, մի վանիր նրան *(այլ հոգ տար նրա կարիքներին և տուր սնունդ, )* ﴿
11. ﴾ Եվ Շնորհը *(Առատաձեռնությունը, բարեհաճությունը, ինչպիսիք են մարգարեությունը և մյուս ուրիշ բարեհաճությունները)* ձեր Տիրոջ *(որ Նա տվել է ձեզ)* հռչակում է: ﴿

## (94) Սուրա Աշ-Շարհ [Բացման]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Արդյո՞ք Մենք չենք բացել քեզ համար *(O Մուհամեդ) քո կուրծքը (այսինքն, քո սիրտը, լուսավորելով և ամրացնելով քո սիրտը Աստվածային Առաջնորդությամբ, հավատքով և իմաստությամբ, այնպես որ դու չզգաս որևէ անհանգստություն հետապնդումից անհավատների:Այն նույնպես կարող է լինել հղում միջադեպի, Մարգարեյի սրտի բացման, երբ նա շատ երիտասարդ էր, Գաբրիել Հրեշտակի կողմից, ով հանեց արյան գունդ այնտեղից և ասաց.'Այդ այն մասն էր, որով Սատանան կարող էր շշնջալ քեզ' Այնուհետ, նա լվաց իր սիրտը Զամզամ ջրով ոսկե թասում:)* ﴿
2. ﴾ Եվ հեռացրեց քեզնից քո բեռը *(Բեռը այստեղ կարող է վերաբերել Ալլահի ուղերձը կրելու պատասխանատվության զգացմանը, այնպես որ Ալլահը թեթևացնի նրա զգացումը:Այն նաև կարող է նշանակել մեղք, և վերաբերել փաստին, որ Ալլահը*

*դարձրել է Մարգարեյին մեղքից հեռու և խոստացել է նրան ներել ամեն անցյալ և ապագա մեղքերը, սակայն սա արտահայտություն է և չի նշանակում, որ Մարգարեն որևէ մեղք է գործել անցյալում կամ որ նա որևէ մեղք կգործի ապագայում:Այն նույնպես, կարող է վերաբերել Մեքքայի մարդկանց վատ սովորություններին մինչ Իսլամը, որը չէր համապատասխանում Մարգարեյի մաքուր և պարզ ներքնաշխարհին, այսպիսով Ալլահը հեռացրեց այն նրանից, ուղարկելով նրան լուսաբանում, )* ﴾

3. ﴿ ինչը ծանրացավ քո մեջքին: ﴾
4. ﴿ Եվ արդյո՞ք Մենք չենք բարձրացրել քո հեղինակությունը *(և դու ունեցար բարձր աստիճան և քո անունը սկսվեց նշվել աղոթքի ամեն կոչում, աղոթքի ժամանակ և Ուրբաթ Օրվա արարողությանը:)* ﴾
5. ﴿ Իրոք, ամեն դժվարությունից հետո գալիս է մեղմացում *(այսպիսով, թող ոչ մի վնաս, որ դու կրում ես անհավատների կողմից, չկանգնեցնի քեզ կոչելու Ալլահին և Նրա կրոնին:)* ﴾
6. ﴿ Իրոք, *(կրկին)*, ամեն դժվարության, հետևում է մեղմացում: ﴾
7. ﴿ Այսպիսով, երբ դու ավարտում ես *(քո ամենօրյա գործերը)*, նվիրիր քեզ անկեղծորեն Ալլահի երկրպագությանը, ﴾
8. ﴿ Եվ քո Տիրոջը *(Միակին)*, ուղղիր ամբողջ քո մտադրությունները և հույսերը: ﴾

## (95) Սուրա Ատ-Թին [Թուզ]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենողորմած)*

1. ﴿ *(Ես երդվում եմ)* թզով և ձիթապտղով *(մեջբերելով վայրը, որտեղ սկսվեց Հիսուսի առաքելությունը, վայր, որը հայտնի է այդ երկու տեսակի ծառերի արտադրությամբ, )* ﴾
2. ﴿ Եվ Սինայի Լեռով *(մեջբերվում է վայրը, որտեղից սկսվել է Մովսեսի առաքելությունը, )* ﴾
3. ﴿ Եվ այս ապահով քաղաքով *(այսինքն, Մեքքայով)* *(մեջբերվում է վայրը, որտեղից սկսվել է Մուհամմեդի առաքելությունը:)* ﴾
4. ﴿ Իրոք, Մենք արարել ենք մարդուն իր լավագույն բարձրությամբ *(կաղապարով, լավագույն ողջամտությամբ և բնածին բնույթով, որը առաջնորդում է նրան Ալլահի հավատք, արդարադատություն, բարիք, բարձր բարոյականություն և այլն:Եվ լավագույն կերպարով, կանգնելու, ուղղվելու և հավասարակշռվելու)*, ﴾

5. ﴾ Այնուհետ, Մենք վերածեցինք նրան ցածրագույներից ցածրագույնի *(այսինքն, այս մարդը, ով չի հետևում իր մաքուր և լավ բնույթին և բնածին էությանը և հետևում է իր ցանկություններին կամ վատ սովորություններին կամ սովորույթներին, որը նա սովորել է իր միջավայրից, այս մարդը կլինի ցածրագույներից ցածրագույնը, նա կընկնի ագահության, թշվառության, վատ էթիկայի մեջ հետևելով առասպելների և կեղծ աստվածների և այլն: Այն նույնպես, կարող է նշանակել, որ նա կլինի ամենացածր աստիճանում Դժոխքում, եթե նա չի հավատում Ալլահին և շնորհակալ չէ Նրան արարելու իրեն լավագույն կերպարով և Իր բոլոր ծանրություններով:)* ﴿
6. ﴾ Բացառությամբ նրանց, ովքեր հավատում և առաքինի արարքներ են գործում *(նրանք, ովքեր հետևում են իրենց մաքուր բնույթին դեպի Ալլահի հավատքը և լավ բարոյականությունը:)* Նրանք կունենան անվերջանալի և անդադար պարգև *(Դրախտ)*: ﴿
7. ﴾ Այսպիսով, ի՞նչն է ստիպում քեզ *(օ անհավատ)* զրպարտելու Հատուցման Օրը *(մինչ դու տեսել ես Ալլահի նշանները, որը ցույց է տալիս Նրա հզորությունը այս ամբողջ տիեզերքում:)* ﴿
8. ﴾ Արդյո՞ք Ալլահը Ամենաարդարը չէ *(Ամենաիմաստունը)* դատավորներից *(երբ Նա նշանակեց Օրը դատելու արարածների միջև և վերադարձնելու սեփականատերերի իրավունքները:) (Իհարկե, Նա է:)* ﴿

## (96) Սուրա Ալ-Ալաք[Կախված արյան գունդ]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Կարդա, քո Տիրոջ Անունով, Ով արարել է *(ամենը, որը գոյություն ունի:)* ﴿
2. ﴾ Նա արարել է մարդուն *'Ալաքից* *(Կախված արյան գնդից:)* ﴿
3. ﴾ Կարդա. Եվ քո Տերը Ամենաառաքինին է: ﴿
4. ﴾ Ով սովորեցրել է *(գրելը)* գրիչով: ﴿
5. ﴾ Նա սովորեցրել է մարդուն, ինչ նա չգիտեր: ﴿
6. ﴾ Ոչ: Իրոք, մարդ ոտնահարել է *(անհավատության մեջ և չար արարքներում)*, ﴿
7. ﴾ Քանի որ նա տեսնում է իրեն ունևոր և ինքնբավ: ﴿
8. ﴾ Իրոք, քո Տիրոջն է վերադարձը *(բոլոր մարդկանց Հարության Օրը և Նա կպարգևատրի կամ կպատժի յուրաքանչյուրին ըստ ինչի նրանք արժանի են)*: ﴿
9. ﴾ Դու *(Օ Մուհամմեդ)* տեսել ես նրան *(Աբու Ջահլին)*, ով խանգարում է, ﴿
10. ﴾ Ստրուկ *(այսինքն, Մուհամմեդին)* *աղոթքի՞ց: (Այս հարցը վերաբերում է այդ խնդրի զարմանքին, ինչպես կարող է Աբու Ջահլը կանխել Մուհամմեդին աղոթելու*

*Ալլահին, Արարչին, քանի որ աղոթքը կապ է իր ստրուկի և Տիրոջ միջև: Այսինքն, նա ոչ միայն իրեն է հեռացնում հավատքից, այլև նաև փորձում է խոչընդոտել ձեզ և մյուս մարդկանց ուղղորդությունից:Այս միջադեպն է. ‘‘Աբու Ջահլը երդվեց, որ եթե նա տեսնի Մարգարեին աղոթելիս, նա կտրորի իր վիզը, մինչ նա խոնարհվում է:Երբ նա տեսավ նրան աղոթելիս, նա գնաց անելու այդպես, սակայն երբ նա մոտեցավ, նա զարմացրեց մարդկանց, երբ կանգնեց իր կրունկներին, փորձելով հակահարված տալ ինչ որ բանի իր ձեռքերով և նա ասաց. ‘Իմ և նրա միջև կրակի փոս կա և վախ և թևեր, ’այնուհետ Մարգարեն ասաց.‘Եթե նա մոտենար ինձ, հրեշտակները կհափշտակեյին նրան մաս առ մաս:’. հաղորդում է Սահիհ Մուսլիմը.)* ﴿

11. ﴾ Դու տեսել ես *(O Մուհամեդ)* եթե նա *(աղոթող ստրուկը, այսինքն Մուհամեդը ինքը)* առաջնորդման մեջ է *(Ալլահից)*, ﴿
12. ﴾ Կամ, պատվիրու՞մ է բարեպաշտություն *(այս հարցը վերաբերում է այս խնդրի զարմանքին, եթե այս վիճակն է մեկի, կանխելու աղոթքը, որ նա առաջնորդման մեջ է և պատվիրում է բարեպատություն, ինչպես կարող է այդպիսի անձը կանխվի ունենալու կապ իր և իր Տիրոջ, Արարչի միջև:)* ﴿
13. ﴾ Դու տեսե՞լ ես *(O Մուհամեդ)* եթե նա *(Աբու Ջահլը, մեղսագործը)* զրպարտում է *(Ղուրանը)* և շրջվում է *(Հավատքից)*, *( ապա զարմանք է առաջանում արդյո ՞ք նա չի վախենում Ալլահից:)* ﴿
14. ﴾ Արդյո՞ք նա *(այս մեղսագործը)* *չգիտի, որ Ալլահը* տեսնում է *(ինչ որ նա անում է:)* ﴿
15. ﴾ Ոչ, եթե նա *(Աբու Ջահլը)* չդադարեր, Մենք կբռնեյինք և կքաշեյինք նրան բռնությամբ իր Նասաիից *(նրա ճակատի բարձր մասից, որը վերաբերվում է ուղեղի դիմային բլթակին, )* ﴿
16. ﴾ Խաբուսիկ, մեղավոր Նասաh *(ճակատի բարձր մաս, որը վերաբերվում է ուղեղի առաջնային բլթակին, բնութագրվում է որպես խաբուսիկ և մեղավոր, որովհետև դիմային բլթակը կառավարում է գիտակցությունը, որը կառավարում է մեր արարքները, դատապարտելը և ինչ կատարվում է մեր առօրյա գործերում, մեր զգացմունքային անրադարձը, լեզուն, որը մենք օգտագործում ենք:Այն նույնպես կարևոր դեր է խաղում տեղեկությունների ընթացքում, ուսուի և ինտելեկտում:Տես.Վիկիպեդիա ‘Ճակատային Բլթակ:’)* ﴿
17. ﴾ Ապա, թող նա կանչի իր աջակիցներին իր մարդկանցից *(ինչպես նա ասաց քեզ, օ Մուհամեդ. “Ես ունեմ ամենաշատ աջակիցները ցեղախմբում:”)* ﴿

18. ﴾ Մենք կկանչենք Դժոխքի պահապան հրեշտակներին *(քաշելու նրան Կրակի մեջ Հանդերձյալ Կյանքում։)* ﴿
19. ﴾ Ոչ, *(Օ Մուհամեդ)* *մի ենթարկվիր նրան* *(ինչից նա կանխում է)*, այլ խոնարհվիր և մոտեցիր *(քո Տիրոջը, Նրա պատվիրաններին հնազանդվելով)*: ﴿

## (97) Սուրա Ալ-Քադր[Աստվածային Ճակատագրի Գիշեր]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Իրոք, Մենք ուղարկել ենք այն *(այս Ղուրանը, այսինքն, սկսել ենք լուսաբանել այն)* ներքև Ալ-Քադր գիշերը *(Պատվի և հրամանի գիշերը, որը Ռամադան ամսվա վերջին տաս օրերից մեկն է, որի ընթացքում Ալլահը հրահանգեց Իր ստրուկներին, ճակատագիր հաջորդ տարվա համար, )* ﴿
2. ﴾ Եվ, ինչպե՞ս դու կարող ես իմանալ *(Օ Մարգարե, այսինքն, դու չես կարող պատկերացնել)* որքան *(հիասքանչ է)* Ալ-Քադր գիշերը. *(արտահայտություն, որը ցույց է տալիս, թե որքան կարևոր է այս գիշերը),* ﴿
3. ﴾ Ալ-Քադր գիշերը ավելի լավ է քան հազարավոր ամիսներ *(այսինքն, երկրպագել Ալլահին այդ գիշեր ավելի լավ է, քան երկրպագել Նրան հազարավոր ամիսներ, այսինքն, 83 տարի և 4 ամիս։)* ﴿
4. ﴾ Այնտեղ իջնում են հրեշտակները և Առ-Ռուհը *(Ոգին, այսինքն, Գաբրիելը)* *իրենց Տիրոջ Թույլտվությամբ, բոլոր Հրահանգներով* *(տարվա բոլոր գործերի հետ կապված։)* ﴿
5. ﴾ *(Ամբողջ այդ գիշերը)*, խաղաղություն է *(և Բարիք Ալլահից Իր հավատացյալ ստրուկներին)* մինչ արշալույսի բացվելը: ﴿

## (98) Սուրա Ալ-Բայինահ [Ակնհայտ Վկայություն]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Նրանք, ովքեր չեն հավատացել Գրերի մարդկանցից *(Հրեաներ և Քրիստոնյաներ, ովքեր եկել են Ալլահի ճիշտ հավատքից, դեպի իրենց նորարարությունները)* և բազմաստվածները, ովքեր չէին պատրաստվում թողնել *(իրենց անհավատությունը)*, մինչ չգա նրանց ակնհայտ վկայություն *(այսինքն, ժամանակի ընթացքում նրանք չեն աճի, բացառությամբ իրենց անհավատությամբ և իրենց*

*նորարարություններով, արդյոք Ալլահը չէր ուղարկել նրանց Մարգարե Մուհամմեդին:)* ﴿

2. ﴾ *(Այս ակնհայտ Վկայությունն է)* Մարգարեն Ալլահից, ով ընթերցում է մաքուր էջեր *(Սուրբ Ղուրան)*, ﴿
3. ﴾ Որտեղ կան ճիշտ Գրքեր *(ճիշտ գրեր և գլուխներ, որոնք ասում են ճշմարտությունը, պարունակում են արդար Օրենքներ և նրանք հեռու են որևէ աղավաղումից:)* ﴿
4. ﴾ Եվ, իրոք նրանց, ում տրվել էին Գրեր *(Հրեաները և Քրիստոնյաները)* տարբերություն չեն դնում *(նրանք բոլորը համաձայն են մարգարեյի գալստյան հետ)* մինչ որ եկավ նրանց Ակնհայտ Վկայություն *(այսինքն, Մարգարե Մուհամմեդը)*, *(մինչ Մարգարե Մուհամմեդի գալուստը, նրանք սպասում էին մարգարեյի գալստյան, ինչպես նշվել է նրանց Գրերում, սակայն երբ Մարգարե Մուհամմեդը եկավ նրանց մոտ ակնհայտ ապացույցներով, նրանք տարբերվեցին և պառակտվեցին, ոմանք մերժեցին նրան և մյուսները հավատացին նրան և հետևեցին նրան:)* ﴿
5. ﴾ Եվ, փաստորեն նրանց չէր հրահանգվել *(այս Ղուրանում)*, սակայն *(ինչ նրանց արդեն հրահանգվել էր իրենց բնօրինակ Գրերում)* երկրպագել Ալլահին *(Միայն)*, և նվիրվել Նրան կրոնում և լինել Հունաֆա' *(հեռու լինել բազմաստվածությունից և շրջվել դեպի Միաստվածություն)*, և ներկայացնել աղոթքներ և տալ Զաքյաթ *(պարտադիր բարեգործություն)*. և այս է ճիշտ *(և ուղիղ)* կրոնը: ﴿
6. ﴾ Իրոք, նրանք ովքեր չեն հավատացել Գրերի մարդկանցից *(Հրեաներ և Քրիստոնյաներ, ովքեր չեն հետևում բնօրինակ ուսմունքներին ոչ Մովսեսի և Հիսուսի, ոչ էլ Մուհամմեդի)* և բազմաստվածները կբնակվեն Դժոխքի Կրակում, որտեղ կբնակվեն հավերժ: Նրանք արարածներից վատագույններն են: ﴿
7. ﴾ Իրոք, նրանք, ովքեր հավատացել են *(Ալլահի Միակությանը և Նրա Մարգարե Մուհամմեդին)* և առաքինի արարքներ են արել, արարածներից լավագույններն են: ﴿
8. ﴾ Նրանց պարգևը իրենց Տիրոջ հետ 'Ադն այգիներն են *(Դրախտը)*, որի տակ գետեր են հոսում, նրանք կբնակվեն այնտեղ հավերժ:Ալլահը կգոհանա նրանցով և նրանք կգոհանան Նրանով:Այս է *(պարգևը)* նրա համար, ով վախենում է իր Տիրոջից: ﴿

## (99) Սուրա Ազ-Զալզալահ [Երկրաշարժ]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Երբ երկիրը թափահարվի իր *(վերջնական)* երկրաշաժով, ﴿
2. ﴾ Եվ, երբ երկիրը թոթափի իր բեռը *(մեռյալները)*, ﴿
3. ﴾ Եվ մարդիկ *(վախեցած և զարմացած)* կասեն. "Ի՞նչ է պատահել դրա հետ:"﴿
4. ﴾ Այդ Օրը այն *(երկիրը)* կպատմի իր պատմությունները *(ինչ բարիք և չարիք է կատարվել դրա վրա)*, ﴿
5. ﴾ Որովհետև քո Տերը կոգեշնչի այդ: ﴿
6. ﴾ Այդ Օրը մարդիկ կշարունակեն ցրվել *(խմբերի), (Դատաստանի վայրից դեպի իրենց վերջնակետ, Դժոխք, թե Դրախտ)*, ցուցադրված իրենց արարքներով *(այսինքն, իրենց պարգևով կամ պատժով)*: ﴿
7. ﴾ Այսպիսով, ով բարիք է գործում հավասար *(նույնիսկ)* ատոմի քաշի *(կամ փոքրիկ մրջյունի)* կտեսնի այդ *(այսինքն, դրա պարգևը)*, ﴿
8. ﴾ Եվ ով չարիք է գործում հավասար *(նույնիսկ)* ատոմի քաշի *(կամ փոքրիկ մրջյունի)* կտեսնի այն *(այսինքն, պատիժը դրա համար)*: ﴿

## (100) Սուրա Ալ-Ադիյա [Որոնք վազում են]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Նրանցով, որոնք վազում են *(գիտնականների մեծամասնությունը ասում են, որ այն վերաբերում է ձիերին, որոնք վազում են հարձակվելու թշնամուն, - և այս կարծիքը մոտ է ճշտին-, մեկ այլ գիտնականների խումբ, հակված է նրան, որ այն վերաբերում է ուղտերին, որոնք վազում են 'Արաֆայից մինչ Մուզդալիֆա, հետո ուխտագնացության ծեսերի Մինա)* փնչացնելով *(ծանր շնչառություն ցուցադրելով, ըստ վազքի ուժգնության)*, ﴿
2. ﴾ Հարվածելով կրակի կայծերին *(իրենց սմբակներով, վազելով, երբ իրենց սմբակները հարվածում են ժայռերին, այն վերաբերում է վազքի ուժգնությանը)*, ﴿
3. ﴾ Վազելով արշավին *(իրենց թշնամիների վրա)* արշալույսին, ﴿
4. ﴾ Եվ բարձրացնելով դրանով *(իրենց վազքով)* փոշի *(երկինք, )* ﴿
5. ﴾ Եվ թափանցելով անմիջապես, կարծես որևէ մեկը հավաքի կենտրոնում է *(այսինքն, թշնամու շարքերում:)* ﴿
6. ﴾ Իրոք մարդը, *(անհավատը)* անշնորհակալ է իր Տիրոջը: ﴿
7. ﴾ Եվ այդ *(երախտամոռությունը իր Տիրոջը)* *նա վկայում է* *(իր արարքներով:)* ﴿
8. ﴾ Եվ, իրոք նա բռնի է ունեցվածքի սիրո մեջ: ﴿

9. ﴾ Արդյո՞ք նա չգիտի, *(մարդը, ինչ է սպասում իրեն, )* երբ գերեզմանների պարունակությունը դուրս գան *(երբ մարդիկ հարություն առնեն)*, ﴿
10. ﴾ Եվ, երբ ամենը, որ գոյություն ունի կրծքում *(մարդկանց, գաղտնիից և մտադրություններից)* հայտնի կլինի: ﴿
11. ﴾ Իրոք, այդ Օրը իրենց Տերը Քաջատեղյակ կլինի նրանց *(ինչպես իրենց արարքներին և կպարգևատրի կամ կպատժի նրանց ըստ իրենց արարքների:)* ﴿

## (101) Սուրա Ալ-Քարիյա [Դատաստանի Օրը, որը Հարվածում է սրտերը]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Ալ-Քարիյա *(այսինքն, Դատաստանի Օրը, որը կհարվածի մարդկանց սրտերը իր սարսափով)*: ﴿
2. ﴾ Ի՞նչ է Ալ-Քարիյան: ﴿
3. ﴾ Եվ ինչպե՞ս դու կարող ես իմանալ *(այսինքն, դու չես կարող պատկերացնել Օ, Մուհամմեդ)* ինչ է *(մեծ բան է)* Ալ-Քարիյան *(արտահայտություն, որը ցույց է տալիս, որքան մեծ բան է այն:)* ﴿
4. ﴾ Այդ Օր է, որում մարդկությունը ուտիճների նման կլինի ցրված, ﴿
5. ﴾ Եվ լեռները կլինեն ինչպես բուրդ խավավորված: ﴿
6. ﴾ Այնուհետ, նրա համար, ում կշիռը *(բարի արարքների)* ծանր կլինի, ﴿
7. ﴾ Նա կլինի հաճելի կյանքում *(Դրախտում)*, ﴿
8. ﴾ Սակայն, նրա համար, ում կշիռը *(բարի արարքների)* կլինի թեթև, ﴿
9. ﴾ Նրա բնակությունը կլինի Հաուիյայում *(հորում, այսինքն, Դժոխքում:)* ﴿
10. ﴾Եվ ինչպե՞ս դու կարող էիր իմանալ *(այսինքն, դու չես կարող պատկերացնել Օ, Մուհամմեդ)* ինչ *(սարսափելի վայր է)* այն *(Ալ-Հաուիյան)*, *(արտահայտություն, որը ցույց է տալիս որքան սարսափելի է այն, )* ﴿
11. ﴾ *(Այն)* կատաղի բոցավառվող Կրակ է: ﴿

## (102) Սուրա Ատ-Տակաթուր [Ցանկություն Ավելիին]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենողորմած)*

1. ﴾ Փոխադարձ մրցակցությունը կուտակելու *(հարստություն, ունենալու երեխաներ և իշխանություն և այլն)* շեղում է քեզ *(Ալլահին երկրպագելուց, )* ﴿

2. ﴾ Քանի դեռ դուք չեք այցելել գերեզմաններ *(այսինքն, մինչ դուք մահանաք, այցելություն բառը այստեղ վերաբերում է նրան, որ գերեզմանները վերջնակետը չեն, սակայն վերջնակետը կլինի Դժոխքը կամ Դրախտը, մահվանից և Հարությունից հետո:)* ﴿
3. ﴾ Ոչ, դուք պիտի իմանաք *(իրականությունը և որ Հանդերձյալ Կյանքը կլինի ավելի լավ ձեզ համար, եթե դուք երկրպագեք Ալլահին, ինչպես հարկն է, աշխարհիկ կյանքում:)*: ﴿
4. ﴾ Կրկին ոչ, դուք պիտի իմանաք *(ձեր ավարտի արդյուքը, նյութական բաների ցանկության դեպքում, որը շեղում է ձեզ երկրպագելու Ալլահին,աշխարհիկ կյանքում:)* ﴿
5. ﴾ Ոչ, եթե դուք իմանայիք հաստատուն գիտելիքներով *(կուտակելու ավարտի արդյունքը, դուք չէիք զբաղեցնի ձեզ, աշխարհիկ կյանքում, )* ﴿
6. ﴾ Դուք, անկասկած կտեսնեք Դժոխքի Կրակը: ﴿
7. ﴾ Եվ, կրկին դուք հաստատ կտեսնեք այն հաստատուն տեսողությամբ *(առանց որևէ կասկածի:)* ﴿
8. ﴾ Այնուհետ այդ Օրը ձեզ անշուշտ կհարցնեն հրճվանքների մասին *(որի մեջ դուք թաղված եք այս աշխարհում:)* ﴿

## (103) Սուրա Ալ-Ասր [Ժամանակը]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ *(Ես երդվում եմ)* *Ալ-Ասրով* *(Ժամանակով, կամ օրվա երրորդ աղոթքով, որը կոչվում է Ալ-Ասր:)* ﴿
2. ﴾ Իրոք, մարդը մոլորված է, ﴿
3. ﴾ Բացառությամբ նրանց, ովքեր հավատում են և առաքինի արարքներ են գործում և խորհուրդ են տալիս միմյանց ճշմարտությունը *(իրական հավատքը և բարի արարքներ գործելը)* և խորհուրդ են տալիս միմյանց համբերություն: ﴿

## (104) Սուրա Ատ-Հումազահ [Զրպարտիչը Մեկի Մեջքի Ետևում]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ )*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Անեծք նրան, ով ծաղրում է ուրիշ մարդկանց իր գործողություններով *(ինչպես մեկը, ով տալիս է հասկացություն իր աչքով կամ գլխով մյուսին, անդադառնալու*

*մեկ ուրիշի սխալի)* կամ իր խոսքերով *(զրպարտիչը կամ բանսարկուն, ով ծաղրում կամ խոսում է ուրիշ մարդկանց սխալներից)*, ﴿

2. ﴾ Ով կուտակել է հարստություն և հաշվել է այն *(վերաբերում է իր եռանդուն սիրուն, դեպի գումարը և երբ նա կուտակում է ավելի գումար, նա ակնկալում է կրկին:)* ﴿
3. ﴾ Նա կարծում է, որ իր ունեցվածքը կդարձնի նրան հավերժ: ﴿
4. ﴾ Ոչ, իրոք նրան կգցեն Ալ-Հութամա *(ջախջախիչ կրակ, որը ջախջախում է ամենը, ինչ մտնում է այնտեղ:)* ﴿
5. ﴾ Եվ ինչպե՞ս դու կարող էիր իմանալ *(այսինքն, դու չես կարող պատկերացնել, Օ Մուհամեդ)* ինչ *(սարսափելի վայր է)* Ալ-Հութաման *(ջախջախիչ Կրակը.) (արտահայտություն, որը ցույց է տալիս, թե որքան սարսափելի է այն, )* ﴿
6. ﴾ *(Այն)* Ալլահի Կրակն է, որը *(հավերժորեն)* բռնկվում է: ﴿
7. ﴾ Որը թափանցում է *(մարմինները)* մինչ սրտերը *(այն վերաբերում է դրա հզորությանն ու այրման արագությանը, քանզի այն հասնում և այրում է սրտերը միևնույն ժամանակ, այն այրում է մարմինը ներսից:)* ﴿
8. ﴾ Այն կողպված է, ներառելով նրանց *(անհավատներին)* այնտեղ: ﴿
9. ﴾ Երկարեցված սյուներով, *(որպեսզի նրանք ի վիճակի չլինեն փախչել)*: ﴿

## (105) Սուրա Ալ-Ֆիլ [Փիղը]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Արդյո՞ք դու *(Օ Մուհամեդ)* չես տեսել, թե ինչպես է քո տերը գործում մարդկանց *(բանակի)* *հետ*, ովքեր ունեյին Փիղ: *(Այն վերաբերում է Աբրահա Ալ-Աշրամի բանակին, որը եկավ Յեմենից, մտադրվելով գրավել Մեքքան և կործանել Ալ-Քաբբան, օգտագործելով հսկայական փիղ, )* ﴿
2. ﴾ Մի՞թե Նա *(Ալլահը)* չի մոլորեցրել նրանց ծրագիրը: ﴿
3. ﴾ Եվ Նա ուղարկեց նրանց դեմ թռչուններ, երամներով: ﴿
4. ﴾ Այրելով նրանց թրծված կավի քարերով: ﴿
5. ﴾ Եվ, Նա դարձրեց նրանց ինչպես կերած ծղոտ *(որը կերել են եղջերավոր անասունները, որ այնուհետ մաքրեն այն:)* ﴿

## (106) Սուրա Քուրեյշ [Քուրեյշ Ցեղախումբը]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ *(Տես, որքան շատ բարեհաճություններ է Ալլահը պարգևել Քուրեյշներին – Մարգարե Մուհամմեդի ցեղախմբին-)* Քանզի Քուրեյշները սովոր էին լավատեղյակության *(կայունության, միասնականության, ապահովության, ապրուստի միջոցների, ապահով ճամփորդության, այսինքն, տես, ինչպես է Ալլահը նրանց կայուն դարձրել, միասնական և համախմբված տներում Սուրբ Մզկիթի շուրջ, այն բանից հետո, երբ նրանք ցրված տներում էին, այնպես, որ Արաբական ցեղախմբերը չէին կարող հարձակում գործել նրանց վրա, որովհետև նրանք բնակվում էին Սուրբ Քաղաքում, և տես, թե ինչպես Նա կործանեց փղի բանակը և որպես արդյունք դրա, նրանք պահեցին իրենց միասնականությունը և հարգեցին արաբական ցեղախմբերի միջև եղած դրությունը, և տես, թե ինչպես Նա տվեց նրանց ապրուստի միջոցներ և կայունություն կյանքում, չնայած այն բանի որ նրանք ապրում էին անմշակ անապատում, իրենց երկու մշտական առևտրական ճանապարհորդությամբ, և ոչ ոք արաբական ցեղախմբերից, չէր կարող հարձակվել նրանց քարավաններին, որովհետև նրանք Սուրբ Քաղաքի բնակիչներն էին և արաբական ցեղախմբերը գնում էին այնտեղ ուխտագնացության ամեն տարի:)* ﴾
2. ﴿ Իրենց սովոր լավատեղյակությամբ տանելու *(քարավանները)* ձմռանը *(ապահով Յեմեն)* և ամռանը *(ապահով, առանց որևէ վախի հին Սիրիա:)* ﴾
3. ﴿ Այսպիսով, *(այս բոլոր բարեհաճություններից հետո)* թող նրանք երկրպագեն *(Ալլահին),* այս Տան Տիրոջը, *(Մեքքայում Սուրբ Մզկիթի, )* ﴾
4. ﴿ Ով սնել է նրանց ընդդեմ քաղցի և ապահովել է նրանց վախից: ﴾

## (107) Սուրա Ալ-Մաուն [Կարիք Հարևան Հարաբերությունների]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Արդյո՞ք դու տեսել ես նրան, ով մերժում է Հատուցումը *(Հարությունը, Դարգևը և Պատիժը Ալլահից Իր ստրուկներին, ըստ իրենց արարքների և այսպիսով նա չի ենթարկվում Ալլահին Իր Պատվիրաններում և Արգելքներում:)* ﴾
2. ﴿ Այդ նա է, ով վանում է որբին խստորեն, ﴾
3. ﴿ Եվ կոչ չի անում սնելու կարիքավորի *(այսինքն, նա ոչ սնում է աղքատին, ոչ էլ խրախուսում է ուրիշներին անելու այդպես:)* ﴾
4. ﴿ Այսպիսով, անեծք լինի նրանց, ովքեր աղոթում են *(փարիսեցիները)*, ﴾
5. ﴿ Նրանց, ովքեր հետաձգում են իրենց աղոթքները *(իրենց հաստատուն, սահմանված ժամանակից, անտարբերության պատճառով:)* ﴾

6. ﴾ Նրանց, ովքեր անում են բարի արարքներ միայն ցուցադրելու *(մարդկանց)*, ﴿
7. ﴾ Եվ, պահել Ալ-Մաուն *(այսինքն, բարեգործությունը և նրանք հրաժարվում են պարտքով տալ իրենց կենցաղային պարագաները, որ հարևանը կարող է խնդրել, այն վերաբերում է իրենց ուժգին ագահությանը:)* ﴿

## (108) Սուրա Ալ-Կաութար [Գետ Դրախտում]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Իրոք, Մենք պարգևել ենք քեզ *(Օ, Մուհամմեդ)* Ալ-Կաութար *(գետ Դրախտում)*: ﴿
2. ﴾ Հետևաբար, շրջվիր աղոթքով դեպի քո Տերը *(նվիրիր քո աղոթքները Միայն Նրան)* և զոհաբերիր *(աղքատներին, միայն Հանուն Ալլահի:)* ﴿
3. ﴾ Իրոք, նա, ով ատում է քեզ, կլինի մեկը, ով կզրկվի *(այս աշխարհում և Հետագայում ամեն բարիքից:Արաբները Իսլամից առաջ, օգտագործում էին այս արտահայտությունը.'զրկված' տղամարդու համար, ով չուներ որդիներ, այսպիսով, նրա անունը զրկվում էր իր մահից հետո, սակայն այստեղ այն վերաբերում է Ալ-'Ասի իբն Ուաելին, ով խոսեց Մարգարեի մասին ծաղրելով, որ Մարգարեն չուներ որդիներ, այն բանից հետո, երբ նրա երեք փոքրիկ երեխաները մահացան միմյանց ետևից և նրա անունը չէր շարունակվի իր մահից հետո, և Ալլահը պատասխանեց, որ նա է մեկը, ով զրկվել է ամեն բարիքից և ոչ թե Մարգարեն, քանզի կարևոր չէ, արդյոք որևէ մեկի անունը կշարունակվի նրա մահից հետո, թե ոչ, սակայն կարևոր է, թե նա կզրկվի բարիքից և օրհնանքից)* հանդերձյալ կյանքում, թե՝ ոչ]

## (109) Սուրա Ալ-Քաֆիրուն[Անհավատները]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Ասա *(Օ Մուհամմեդ)*. "Օ Անհավատներ ﴿
2. ﴾ Ես չեմ երկրպագում այն, ինչ դուք եք երկրպագում, ﴿
3. ﴾ Ոչ էլ դու կերկրպագեք այն, ինչ ես եմ երկրպագում: ﴿
4. ﴾ Եվ ես չեմ երկրպագի այն, ինչ դու եք երկրպագում, ﴿
5. ﴾ Ոչ էլ դուք կերկրպագեք այն, ինչ ես եմ երկրպագում: ﴿
6. ﴾ Ձեզ լինի ձեր կրոնը և ինձ, իմ կրոնը: ﴿

## (110) Սուրա Ան-Նասր [Հաղթանակը]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Երբ գալիս է հաղթանակը Ալլահից և Ալ-Ֆատեհ *(մուտք Մեքքա հաղթանակով առանց պատերազմի կամ մարտի, -Ֆատեհ Մեքքա-, )* ﴿
2. ﴾ Եվ դու տեսնում ես, որ մարդիկ մտնում են Ալլահի կրոն *(Իսլամ)* ամբոխներով, ﴿
3. ﴾ Ապա, փառաբանիր և գովերգիր քո Տիրոջը ասելով Ալ-Համդու Լիլեհ *(Փառք լինի Ալլահին)* և խնդրիր Նրա Թողությունը:Իրոք, Նա ապաշխարհության Հավերժ Ընդունողն է: ﴿

## (111) Սուրա Ալ-Մասադ [Արմավենու Ջիղ]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴾ Կորեն և կործանվեն Աբու Լահաբի երկու ձեռքերը *(Արաբական արտահայտություն, որը նշանակում է "թող Աբու Լահաբը կործանվի և չարչարվի,")*, և *(իրոք)* նա կորավ և կործանվեց: *(Ղուրանում անցյալ ժամանակը հաճախ օգտագործվում է որևէ բանի համար, որը կկատարվի ապագայում, ցույց տալու, որ այն անշուշտ կկատարվի և ոչինչ չի կարող փոխել այն) (Աբու Լահաբը Մարգարեյի հորեղբայրներից մեկն էր և անողոք թշնամին: Երբ Մարգարեն կանչեց Քուրեյշների ղեկավարներին և կոչեց նրանց Իսլամի, Աբու Լահաբը ասաց նրան.՝Այս ոչ կարևոր բանի համար դու կանչեցի՞ր մեզ: Կործանվես դու:՝ Այսպիսով, այս Տարբերակում կա պատասխան այն բանի, ինչ ասաց Աբու Լահաբը:)* ﴿
2. ﴾ Նրա ունեցվածքը և նրա երեխաները չեն օգնի նրան *(չեն պաշտպանի նրան պատժից, ոչ էլ կօգնեն նրան ընդդեմ Ալլահի:)* ﴿
3. ﴾ Նա կմտնի Կրակ *(կատաղի)* բոցավառվող հրեր, այրվելու այնտեղ, ﴿
4. ﴾ Եվ նրա կինը, նունպես, ով փայտ է կրում *(այսինքն, փշերը, որոնք նա սովոր էր կրել և դնել Մարգարեյի ճանապարհին, որպեսզի վնասի նրան, կամ սովոր էր զրպարտել նրան, )* ﴿
5. ﴾ Նրա պարանոցին Մասադ պարանն է *(ոլորված, շատ կոպիտ արմավենու ջիլ, որով նա կախված կլինի Դժոխքում և այնուհետ կընկնի ներքև:)* ﴿

## (112) Սուրա Ալ-Իխլաս [Հավատարմությունը– Ազնվությունը]

Ալլահի Անունով, Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Ասա, *(Օ Մուհամմեդ)*. Նա Ալլահն է, Աhադը *(Միակը և Եզակի Աստվածը, Ով չունի զուգընկեր կամ համահավասար և չկա ուրիշ աստված բացառությամբ Նրանից: Ոչ ոք չի կիսում Նրա հետ Նրա Աստվածային Ածականները, ոչ ոք չի կարող ներկայացնել Նրա Աստվածային Գործողությունները և ոչ ոք չունի ինքնություն, ինչպիսին է Նրա Աստվածային Ինքնությունը: Նա Անբաժան է և ոչ թե երեքը մեկում, ինչպես Քրիստոնյաներն են ասում: Նա երբեք չի Ունեցել կին կամ որդիներ և Նա Միակն է, Ով կարող է ներել մեր մեղքերը և դատել մեզ Դատաստանի Օրը)*: ﴾
2. ﴿ Ալլահը Աս- Սամադ *(Ինքնաբավը, Կատարյալը Իր Փառքի և Պատվի, Իր Ածականների, Իր գիտելիքի, Իր հզորության մեջ, Ով ոչինչի կարիք չունի Իր արարածներից, սակայն, Ում կարիքը ունեն բոլոր արարածները և Նա ոչ սնվում է, ոչ ըմպում, ոչ էլ մահանում)*: ﴾
3. ﴿ Նա չի ծնում, ոչ էլ Նա ծնվել է: ﴾
4. ﴿ Եվ ոչ ոք չկա Նրան համահավասար կամ համեմատելի: ﴾

## (113) Սուրա Ալ-Ֆալաք [Արշալույս]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Ասա *(Օ Մուհամմեդ)*: “Ես փնտրում եմ ապաստանը *(Ալլահի)* արշալույսի Տիրոջ, ﴾
2. ﴿ Չարիքից *(որը կարող է գալ ամեն ինչից)* ինչ Նա արարել է, ﴾
3. ﴿ Եվ չարիքից *(այսինքն, որը կարող է գալ)* գիշերվա ընթացքում, քանի որ այն գալիս է թանձր խավարով *(և քողարկում է ամենը)*, ﴾
4. ﴿ Եվ նրանց չարիքից *(վհուկների)*, ովքեր հարվածում են հանգույցներին, ﴾
5. ﴿ Եվ նախանձողի չարիքից, երբ նա նախանձում է:”﴾

## (114) Սուրա Ան-Նաս [Մարդկություն]

Ալլահի Անունով Առ-Ռահման *(Ամենաբարեգութ)*, Առ-Ռահիմ *(Ամենաողորմած)*

1. ﴿ Ասա *(Օ Մուհամմեդ)*.“Ես փնտրում են ապաստանը *(Ալլահի)* մարդկության Տիրոջ, ﴾
2. ﴿ Մարդկության Արքայի, ﴾
3. ﴿ Մարդկության Աստծո, ﴾
4. ﴿ Շշնջացողի չարիքից *(սատանայի, ով շշնջում է չարիք մարդկանց սրտերում)*, ով հանում է *(իր շշնջոցով մարդու սրտից մեկ առ մեկ Ալլահին հիշատակելը)*, ﴾

5. ﴾ Ով շշնջում է *(չարիք)* կրծքերում *(սրտերում)* մարդկության, ﴿
6. ﴾ *(Այս շշնջացողը, ով կարող է լինել)* ջիններից կամ մարդկությունից *(շատ մարդիկ կարող են շշնջալ ուրիշ մարդկանց անել վատ արարքներ և համոզել նրանց, մինչ նրանք իրոք անում են:)* ﴿